


ՂՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

Գիրքը լուսապատճենահանվել է

"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ԷԴՈՒԱՐԴ Ս. ԼԻՏԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷԴՈՒԱՐԴ Ս. ԼԻՏԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

L 633

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գլխավոր խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Էդուարդ Ս. Լիսի

L 633 Հայկական հարցը.-Եր.: Նահապետ, 2003, 40 էջ:

L $\frac{0503020913}{0076(01) 2003}$ 2003թ.

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930 – 994 – 4 - 9

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Անցյալ տարի սեպտեմբերին կարճ ժամանակով գտնվում էի Երևանում: Գործով այցելեցի բազմաթիվ գիտական հիմնարկներ, թանգարաններ, այդ թվում նաև Հայոց ցեղասպանության նորակառույց թանգարանը, ծանոթացա թանգարանի տնօրեն պրն Լ. Բարսեղյանի հետ: Մեր կարճ գրույցի վերջում նա ինձ հանձնեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր տարիներին հրատարակված գրքերի, հոդվածների, ուսումնասիրությունների մի ցանկ: Լուս Անջելես վերադարձից հետո, երբ կրկին աչքի անցկացրի նույն ցուցակը, ուշադրությունս գրավեց մի ընդարձակ վերնագիր՝ «Հայկական հարցը Ամերիկայի ներկայացուցիչների պալատում»: Ըստ էության դա մի ընդարձակ զեկուցում էր, որը 1918թ. փետրվարի 7-ին կարդացել է ինքը՝ հեղինակը, Քանզաս նահանգի լեյտենանտ-գնդապետ Էդուարդ Ս. Լիտլը, այսինքն առաջին համաշխարհային պատերազմի ավարտից ութ ամիս առաջ: Երկար որոնումներից հետո ինձ հաջողվեց ձեռք բերել այդ զեկուցման բնագիրը: Երկու անգամ ընթերցելուց հետո, ապա նկատելով նյութի այժմեական հնչեղությունն ու արտակարգ շահեկան լինելը մեր ժողովրդի նորագույն պատմության ամենախճճված ժամանակաշրջանի համար, նախ մտածեցի բնագրի մեջ առաջ քաշված մի շարք առավել կարևոր հարցերի վերաբերյալ գրել և հրատարակել մի ընդարձակ հոդված՝ լուսաբանելով ըստ մեր հայեցողության: Սակայն երկար մտորումներից հետո, հրաժարվեցի, խորապես գիտակցելով, որ պարոն Լիտլի զեկուցման մեջ առկա են բազմաթիվ հակասական, խիստ մանրակրկիտ ստուգումներ պահանջող հարցերի պատասխաններ, որոնց լուսաբանման համար անհրաժեշտ է պատերազմական այդ ժամանակաշրջանի (1914-1918թթ.) գիտակ և հմուտ մասնագետ-պատմաբանի լուրջ ու բարեխիղճ աշխատանքը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ բնագրի բուն էությունը, որ կարմիր թելի պես անցնում է ողջ շարադրանքի միջով, համահնչուն է 1918թ. երկրորդ անգամ նախագահական արժոն նստած, այս աշխարհի վրա համընդհանուր խաղաղություն խոստացող, ռոմանտիկ, ազնիվ ու բարի Վուդրո Վիլսոնի

գաղափարներին: Ամերիկայի Օախագահը, պատերազմի մեջ մտնելով, հայտարարեց. «Մենք երջանիկ ենք կռվելու համուն ամբողջ աշխարհի վերջնական խաղաղության և համուն ժողովուրդների ազատագրության... Աշխարհին պետք է, ապառքվել դեմոկրատիա, ոչ թե ֆիզիկական ուժի հաղթական հաստատում, այլ իրավունքի, մարդկային իրավունքի հաստատում, որի միակ պաշտպանը հանդիսանում ենք մենք... Մենք միայն հանդես ենք գալիս փոքր ժողովուրդների իրավունքի և ազատության համար, իրավունքի համընդհանուր տիրապետության համար...»:

Իսկ ի՞նչ է կատարվում այսօր: Եվրոպական կառավարությունների դիվանագիտական կերպարը առանձնահատուկ ուժգնությամբ «փայլեց» Ղարաբաղի հարցի կարգավորման տխրահռչակ Լիզբոնի համաժողովում, որտեղ երևաց այդ երկրների դիվանագետների երկերեսանությունն ու խաբեությունը, շողոքորթ նենգությունը, իրենց շահերը ամեն մի մարդկային բարոյականությունից վեր դասելը: Նրանք ունկնդրեցին, բայց չլսեցին, տեսան, բայց չնկատեցին, մոզոնեցին ինչ որ անհրաժեշտ էր իրենց շահերի համար, տեսան Արցախի փաստացի գոյությունը, բայց անտեսեցին, ռոնատակ տվեցին մի բուռ հերոսական ժողովրդի արդար պահանջները: Բայց Արցախը մնաց աներեր:

Պրն. Լիտվի գեկուցման մեջ ակնհայտ է հեղինակի դրական վերաբերմունքը դեպի հայերը, նրա արդար իրավունքները, պատմական անհերքելի փաստերի վրա հիմնված նրա գնահատականը: Բայց միաժամանակ երևում են մեծ տերության ներկայացուցչի անթաքույց նկրտումները: Ինչևէ, ինչպես նշեցի, որոշեցի թարգմանված վիճակում բնագիրը ներկայացնել հայ ընթերցողին: Թող յուրաքայուրը առողջ տրամաբանությամբ ճիշտ եզրակացություններ կատարի, թե մեծ տերությունները ինչպիսի քաղաքական նկրտումներ են հետապնդել 20-րդ դարի սկզբներին և ինչպիսին է նրանց դիրքորոշումն այսօր, 85 տարի հետո:

Բնագիրը թարգմանել ենք որոշ կրճատումներով:

Գուրգեն Սարգսյան
Լ.ՈՍ ԱՍԿԵԼԵԱ, 19 փետրվարի 1997թ.

ՉԵԿՈՒՑՈՒՄ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ
1918թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐԻԱՆ

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ - Քառորդ դար է անցել այն օրվանից, երբ ես ապրում էի Նեղոսի հովտում, նավարկում հունական մի կղզուց մյուսը, կարճ ժամանակով շրջում Պաղեստինի լեռներում, լողում Հորդանան գետում: Այդ ժամանակ Սուեզի ջրանցքը դարձել էր հանգուցակետը աշխարհի տիրապետման համար: Կահիրեն դարձել էր աշխարհի դիվանագիտության և քաղաքականության փոթորկահույզ կենտրոնը: Նշված կենտրոնից Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրիան, Ռուսաստանը և Թուրքիան քաղաքական գորախաղերով ձգտում էին նպաստավոր դիրք գրավել ներկայիս մղվող համընդհանուր գոտեմարտում: Պետական մեքենայի հմուտ ղեկավարությունը, պատերազմը, բարձրաստիճան հոգևորականությունը, որոնք այդ տարիներին մեկնաբանում էին Մերձավոր Արևելքի քաղաքական դրությունը, այժմ չկան, անհետացել են հավերժում: Համաշխարհային մեծ հրդեհը, որին նրանք այնքան երկար ժամանակ շունչները պահած ակնդետ սպասում էին, վերջապես վրա հասավ առանց նրանց: Եթե մեռնող, մարմնող անցյալի կայծերին ես կարողանամ շունչ տալ, վառել չնչին մի բոց, ի վիճակի լինեմ ինչ-որ չափով լույս սփռել թուրքերի, հայերի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների հարաբերությունների վրա, կզգամ, որ իմ ծառայությունը Կոնգրեսում գուր չի անցել:

Երբ ես նշանակվեցի, Խեղիխ Թովֆիկը մահացել էր, իսկ նրա որդին՝ 20-21 տարեկան իշխան Աբբաս Հիլմին, վերադարձավ Վիեննայից, որտեղ նա ուսում էր ստանում, բարձրանալու 200 տարվա կյանք ունեցող գահին, որ հաստատել էր նրա պապը՝ Մուհամեդ Ալին՝ Եվրոպայից և Ամերիկայից դուրս ամենամեծ ղեկավարը:

Կարճահասակ, ամրակազմ ու հաստատակամ, բարձր արժանապատվության տեր երիտասարդ իշխան Աբբաս Հիլ-

մին՝ մի դար արդեն գոյություն ունեցող թագավորության գահակալը, անմիջապես բախվեց Քրոմերի՝ գահի ետևում կանգնած անգլիական իշխանության ներկայացուցչի հետ և որպես վարչապետ նշանակեց Ֆաբրի փաշային՝ բարձրահասակ, գեղեցիկ չերքեզին, որի մոր կողմից սերնդեսերունդ եղել էին չերքեզները: Քրոմերը առաջարկեց Անգլիային բարեկամ, ճկուն ու համակերպող մի եզիպտացու այդ պաշտոնի համար, և այդ կապակցությամբ Բրիտանական արտաքին գործերի նախարար Ռոզբերին հեռագրեց, որ ինքը պատասխանատու չի զգա իրեն հետագայում պատահած իրադարձությունների համար, եթե իրանց առաջարկած թեկնածուն չնշանակվի: Ֆրանսիան և Ռուսաստանը հրաժարվեցին պաշտպանելու մանուկ թագավորի ծրագիրը, պատերազմը կանխվեց: Երիտասարդ գահակալը վճռել էր լինել արքայավայել և սպառնաց ինքնասպանություն գործել, քան տեղի տալ անգլիացիների պահանջին: Քրոմերը հրաժարվեց իր վրա վերցնելու հեղափոխության և մահմեդական անկարգությունների պատասխանատվությունը, որոնք կարող էին պատահել, վերջիվերջո նրանք համաձայնեցին և կանգ առան Ռիազ փաշայի վրա: Կարճահասակ, նիհար ծերունին բարեպաշտ մահմեդական էր, ջերմ և կրքոտ հայրենասեր, եզիպտացիները գոհ էին: Ռիազ փաշան ազնիվ պետական պաշտոնյա էր, հմուտ բիզնեսմեն, ընդունակ ղեկավար: Քրոմերին գոհացնում էր: Եռանդուն, վարվելաձևով տղայական, տերոդորմայի հուլունքները նյարդայնորեն հաշվող, գործելակերպի մեջ զգուշավոր, շրջահայաց ու վճռական, նրա ապառաժ նկարագիրը թաքնված էր իր շարժումների փրփուրի տակ, որոնք մոլորության մեջ էին զցում բոլոր նրանց, ովքեր մոտիկից ծանոթ չէին նրան:

Ուշադրության արժանի հպարտությամբ եմ հիշում, երբ նա իմ մասին հաճախ կրկնում էր՝ «Ահա և մեր բարեկամը»: Ֆինանսների նախարար Բուտրոս փաշան քրիստոնյա դպտի էր, հին եզիպտացիների սերնդից: Նա մեր տիրոջ 60-րդ տարում Սուրբ Մարկոսի կողմից հիմնադրած եկեղեցու անդամ էր: Ամեն մի արտահայտության մեջ ի հայտ էր գալիս նրա սառը դատողությունը: Քրոմերին փոխարինող Հարդինգին (հետագայում Ուզանդայի կառավարիչ, իսկ այժմ, կարծում եմ, Իս-

պանիայի դեսպան) ասում էր, որ անգլիացիները պետք է վերջ տան այն կեղծիքին, թե թույլ են տվել Եգիպտացիները իրենք իրենց կառավարեն, անգլիացիները դուրս պիտի գան Եգիպտոսից: Հետագա տարիներին, երբ ինքը դարձավ վարչապետ, իր դիրքորոշումը հասցրեց ավարտին: Մի ֆանատիկ, մոլեռանդ մահմեդական դանակի հարվածով սպանեց այդ հայրենասերին, պարզապես ցուցադրելու աշխարհին, որ անհրաժեշտ է մի գլխավոր և մի երկրորդական նախադրյալ և մարդկային բնավորության մի երրորդ նախադրյալ գործը հանգեցնելու իրական սիլլոգիզմի, և այսպիսով վերջ գտավ մի շատ ընդունակ մարդու կարիերան: Արտաքին գործերի նախարար Տիգրան փաշան քրիստոնյա հայ էր, կրթված ու ճանաչված դիվանագետ, որի մտավոր ուժն ու կարողությունը կարելի է համեմատել Վաշինգտոնի հասարակական կյանքի ուզածդ գործչի հետ: Նրա միջոցով առաջին անգամ ես ծանոթացա հայ ժողովրդի հետ, որի մի անդամն էր նա: Յակոբ փաշա Արթինը՝ լուսավորության ու կրթության նախարարը, նույնպես հայ էր, կրթված, խոհուն, գիտուն մարդ:

Այդ ժամանակաշրջանի ամենահայտնի ու ճանաչված թուրքը՝ Մուխթար փաշա Ղազին, հին ու փորձված զինվորական էր, Կարսի հերոսը, մի ազնվական մարդ, որին առաջավոր հայացքների համար Մուլթանը շնորհագուրկ արեց և ուղարկեց Եգիպտոս գերագույն կոմիսարի հանձնակատարությամբ, բայց դա մի տեսակ պալատական արքայ էր: Թուրքիան այդ շրջանում անվանական իշխանություն ուներ Եգիպտոսի վրա և ինչպես նա էր ակնարկում՝ «ինքը այստեղ է որպես բողոք անգլիական տիրապետության դեմ»: Ավելի ուշ, երբ Բուլղարիան Բալկանյան պատերազմում գրեթե գրավել էր Կ. Պոլիսը, հասարակայնության ճնշման տակ, Մուլթանը նրան ետ կանչեց պաշտոնաթողությունից և նշանակեց Բարձր Դռան մեծ վեզիր: Ավելի քան ութսուն տարիների ակտիվ կյանքի ընթացքում՝ պատերազմում թե խաղաղության տարիներին, նա արժանացել է իր ժողովրդի հիացմունքին, ինչպես նաև ռուսների, հայերի, անգլիացիների և նրանց անսահման հարգանքին, ովքեր բախտ են ունեցել ճանաչելու այդ մարդուն, որն այժմ թուրքական սենատի անդամն ու քաղաքականության մեջ ծանր հրե-

տանին է: Շրջապատված հարյուրավոր ծառաներով, բայց որպես պետական բանտարկյալ իր պալատում ապրում էր սուղանցի Չորլեր փաշան՝ Կենտրոնական Աֆրիկայի ազդեցիկ գերի թագավորն ու երբեմնի հզոր կառավարիչը, որն այժմ իր օրերն է անցկացնում ջղագրգիռ պայմաններում: Չմյուռնիա քաղաքում ծնված Նուբար փաշան՝ թուրքական կայսրության վերջին տարիների մեծագույն քաղաքագետն էր: Նա իր քաղաքական կենսագրությունը սկսել էր 40 տարեկանում Մոհամեդ Ալիի պալատում, որպես քարտուղար, ապա նրա հաջորդի և խորթ որդու իշխանության տարիներին: Նուբար փաշան վերջինիս, այն է՝ Իբրահիմ փաշային անվանում էր «ռազմական մեծատաղանդ բարբարոս»: Նուբար փաշան Իբրահիմ փաշայի օրոք մի քանի անգամ բարձրացել էր վարչապետական աթոռին, եղել Եգիպտոսի բոլոր իշխողների ամենահավատարիմ խորհրդականը: Այժմ նա կոչված է հանգստի և ապրում է հարուստ կյանքով: Նա Կահիրեի բարձր խավի սեղանների և հյուրասիրությունների անպակաս ու հետաքրքիր մարդն է:

ԹՈՒՐԷԻԱՆ ԵՎ ԲՈՒՆՂԱՐԻԱՆ

Պատերազմի սկզբից մինչ այժմ Օսմանյան կայսրությունը կորցրել է Արաբիան, Եգիպտոսը, մնացել է 500000 քառակուսի մղոն տարածություն, որից միայն 10000-ը Եվրոպական ցամաքամասում: Երբ Բալկանյան առաջին պատերազմը ավարտվեց 1913թ., ստորագրված հաշտության պայմանագրի համաձայն, այս տարածքի մեծ մասը անցավ Բուլղարիային, ներառյալ Ադրիանապոլիսը: Ավստրո-Հունգարական կայսրության միջամտությունը անհնար դարձրեց սերբերին և հույներին տիրանալու Ալբանիային պատկանող հողերին և Ալբանիան դարձրեց անկախ պետություն: Դա պատճառ դարձավ, որ սերբերն ու հույները իրենց դիրքորոշումը փոխեն Մակեդոնիայի բաժանման հարցում, ինչն իր հերթին պատճառ դարձավ Բալկանյան երկրորդ պատերազմին, մի կողմից Բուլղարիայի, մյուս կողմից սերբերի, հույների և ռումիների միջև: Թուրքերը օգտվեցին առիթից. չեղյալ հայտարարեցին հաշտության պայմանագիրը Բուլղարիայի հետ և գրավեցին Ադրիանապոլիսն ու

ընդարձակ հողային տարածություններ: Արդյունքն եղավ այն, որ Բուլղարիան Բալկանյան երկրորդ պատերազմի ավարտին ավելի քիչ ստացավ, հակառակ այն բանի, որ իր վրա կրեց պատերազմի ծանրության մեծ բեռը, քան Ռումինիան, Չերնագորիան, Սերբիան կամ Հունաստանը: Երբ Սուլթանը և Էնվեր փաշան (այդ օրերին դեռևս բեյ) վերագրավեցին Ադրիանապոլիսը, Գերմանիայի կայզերը շնորհավորական հեռագիր հղեց, հետևաբար, հասկանալի են այն բարի զգացումները, որ բուլղարներն ունեցան Գերմանիայի նկատմամբ:

Մակեդոնիայի նկատմամբ գոյություն ուներ տարբեր մոտեցում, և սա ամենակարևոր հարցն էր: Ինչքան պիտի ստանար Հունաստանը, ինչքան Սերբիան, ինչքան Բուլղարիան: Մի գիտուն բուլղարացի ինձ ասաց. «Մենք առաջարկում ենք, որ բուլղարները ապրեն Մակեդոնիայում կամ կորցնեն ամբողջությամբ»: Բուլղարիան բարյացակամ չէր դեպի մեր թշնամիները, նա հավանաբար նախընտրեր չօգնել նրանց, դրա համար նա հիմնավոր պատճառ ուներ ատելու նրանց բոլորին: Նա միացավ մեր թշնամիներին, պարզապես ետ ստանալու իր բաժինը Մակեդոնիայից:

Քառասուն տարի առաջ Բուլղարիա գոյություն չուներ: Այժմ առավել նպաստավոր, հիանալի առիթ է օգնելու, կազմակերպելու հայ ազգին այնպես, ինչպես 40 տարի առաջ բուլղարներին: 1863 թվականին նյույորքցի պրն Ռոբերտը Կ. Պոլսում հիմնադրեց իր անվան քոլեջ, որ ղեկավարվում էր ամերիկյան միսիոներական ուսուցիչների կողմից: Այստեղ, այս քոլեջում բուլղարացի աշակերտները կրթություն ստացան և, ներշնչվելով «Ռոբերտ քոլեջում» ստացած դաստիարակությամբ, ոտքի կանգնեցին ու պայքարեցին իրենց չազատության համար: Բուլղարիան ամերիկյան դաստիարակության արդյունք էր: Նրանց զգացումները մեր հանդեպ հավանաբար ավելի բարյացակամ են, քան մի այլ պետության նկատմամբ:

Ես կարծում եմ՝ Կոնգրեսը ճիշտ վարվեց պատերազմ չհայտարարելով Բուլղարիային: Շատ հավանական է, եթե Թուրքիան պարտվի այս պատերազմում, հնարավոր կլինի հաշտության պայմանագիր կնքել Բուլղարիայի հետ, պայմաններ ստեղծելով վերջինիս համար՝ դուրս գալու պատերազմից:

Փաստորեն դա դառնում է գրեթե անխուսափելի: Անհրաժեշտ է, ինչ-որ չափով խելամիտ լուծում գտնել Բուլղարիայի, Սերբիայի և Հունաստանի միջև, և գուցե Միացյալ Նահանգները կկարողանա ձեռք բերել բոլոր կողմերի վստահությունը օգնելու ինչ-որ չափով, ինչպես ոուսներն էին անում որոշ ժամանակ: Կա ընդհանուր բարյացակամ զգացմունք, որ Բուլղարիան կարող է պնդել իր իրավունքների վրա, և ըստ 1913թ. պայմանագրի, վերստանա Ադրիանապոլիսը: Այնուամենայնիվ, թուրքերը երկար ժամանակ է, ինչ Եվրոպայում են, բայց այժմ նրանք կորցրել են իրենց բոլոր տիրույթները, և տիրում է այն ըմբռնումը, որ մնացած պոչը՝ 10,000 քառակուսի մղոն տարածքը, պետք է կտրվի, միաժամանակ նկատի ունենալով, որ դա մեծ գլխացավանք կլինի, թեև նման է մի հարվածով երկու նապաստակ խփելուն: Եվրոպական Թուրքիայի բնակչության կեսը մահմեդական է, մյուս կեսը՝ քրիստոնյա: Եթե Բուլղարիան ստանա մեծ մասը, իսկ Կ. Պոլիսն էլ դառնա ազատ քաղաք հօգուտ ամբողջ աշխարհի, դա մի շատ գեղեցիկ վերջաբան կլինի, և վերջ կտրվի մահմեդականների ներխուժմանը Եվրոպա:

Թուրքիայի տարածքի մնացած մասի մեջ, այն, ինչ որ ես այժմ ձեզ ցույց կտամ քարտեզի վրա, մտնում են Փոքր Ասիան (Անատոլիան), Սիրիան, Պաղեստինը և Միջագետքը: 530000 քառակուսի մղոն այս տարածության վրա ապրում է 18 միլիոն մարդ, երեք հինգերորդը մահմեդական, երկու հինգերորդը քրիստոնյա, և մոտավորապես երեք թե չորս հարյուր հազար հրեա: Սկսենք Եգիպտոսից (քարտեզի վրա մատնացույց է արվում) մինչև Բաղդադ, մինչև Միջագետք և Պաղեստին, Հայաստան ու Քուրդիստան, մինչև Անատոլիա և Փոքր Ասիա: Այս ընդարձակ երկիրը, որ ես այժմ ցույց եմ տալիս, Անատոլիան է՝ բնակեցված թուրքերով: Եթե Թուրքական կայսրությունը դուրս մղվի Եվրոպայից, նրան կմնա Անատոլիան, որտեղ ապրում է թուրք ժողովուրդը:

Դատական և վարչական դրությունը Օսմանյան կայսրության մեջ եղել է շատ եզակի, նմանը չունեցող իրողություն, այնպես որ, եթե մարդ անձանոթ է այդ պայմաններին, դժվար թե հասկանա իրադրությունը: Փաստական օրենքը Դուրանն է,

և վերջինիս ամենախիստ մեկնաբանութեամբ քրիստոնյանները պարզապէս օրենքից դուրս են, գրկված ամեն մի իրավունքի պաշտպանութիւնից, և սա է անցյալում հույների, բուլղարների, սերբերի և հայերի նկատմամբ եղած անհոգութեան պատճառը: Ոչ մի օտար ժողովուրդ չի ենթարկվել նման վերաբերմունքի մի այլ կառավարութեան կողմից: Այստեղ չեղյալ են հայտարարվել կրօնական այն օրենքները, որոնք սկիզբ են առել Բյուզանդական կայսրութեան ժամանակաշրջանից, հասել օսմանյան սուլթանին 500 տարի առաջ: Ամերիկյան, ֆրանսիական կամ գերմանական դիվանագիտական և կամ հյուպատոսական ներկայացուցիչը Թուրքիայում և Եգիպտոսում իր քաղաքացու համար միակ դատական և վարչական իշխանութիւնն է, նրա հրամանով են ձերբակալվում և դատվում: Այդ կայսրութիւնում բազմաթիվ օտարականներ կան, որոնց նկատմամբ իշխանութեան նման կիրառումը նշանակելի տեղ է գրավում առայսօր: Այժմ արդեն թուրքերը պահանջում են չեղյալ հայտարարել եկեղեցական օրենքները այնպէս, ինչպէս կատարեց Ճապոնիան 19 տարի առաջ, ճիշտ այն օրը, երբ ես ոտք դրեցի այդ երկիրը: 42 տարի առաջ Եգիպտոսի վարչապետը՝ Նուբար փաշան, հայ քաղաքագետը, ձեռք բերեց օտարերկրյա մեծ տերութիւնների համաձայնութիւնը, ըստ որի կազմակերպվում էր միջազգային խառն դատարան, որը դատում էր բոլոր քաղաքացիական դատերը, որոնք ծագում էին եգիպտացիների և օտարերկրացիների միջև: Սա իրավունք էր տալիս օտարերկրյա ներկայացուցիչներին դատավճիռ կայացնել քրեական բոլոր գործերի նկատմամբ:

Ըստ կրօնա-եկեղեցական օրենքի, Սուլթանը նշանակում էր տարբեր եկեղեցիների ղեկավարներ, որոնք կոչվում էին պատրիարքներ, իսկ վերջիններս անվանապէս ընտրվում էին տարբեր եկեղեցիների կողմից, և ձևական արարողակարգից հետո ստանձնում էին համայնքի գործերը: Կ. Պոլսի հայկական պատրիարքը, որ իր ժողովրդի նաև քաղաքական գործերի պատասխանատուն էր, 1878թ., երբ Բիքոնսֆիլդը և Բիամարկը կազմակերպեցին Բեռլինի վեհաժողովը, որն ենթադրում էր լուծելու Եվրոպայի ճակատագիրը ընդմիջտ, Մկրտիչ Խրիմյանն իր երեք խորհրդականներով ներկայացնում էր հայ ժողո-

վորդն այդ վեհաժողովում: Նրանք ձեռք բերեցին մի համաձայնություն այդ մեծ պայմանագրով, որ հայերը նույնպես պետք է ստանան արդարություն թուրքական կառավարությունից, մի համաձայնություն, որ երաշխավորվում էր եվրոպական բոլոր մեծ տերությունների կողմից: Սա թուրքերը երբեք չկիրառեցին, եվրոպացի երաշխավորողները չհարգեցին իրենց ստորագրությունը, իսկ հայերի՝ ստանձնած պարտավորության կիրառման տևական պահանջը պայմանագրի ընդունման սկզբից պատճառ էր դառնում ահավոր ջարդերի: Հայերը փաստորեն պնդում էին իրենց իրավունքների վրա օրենքով այնպես, ինչպես ամերիկացին կանի, իսկ այդ երկրում քրիստոնյայի և այն հայի կողմից այդպիսի պահանջը ոչ մի թուրք չէր ընդունի, չէր կարող տանել:

Թուրքերը ռազմատենչ են, նրանք երբեք չեն յուրացրել և ընդունակ չեն եղել յուրացնելու քաղաքացիական կառավարման մեթոդները: Իրենց իշխանության տակ գտնվող քրիստոնյաներին դիտում էին որպես համախոհներ միևնույն ռազմաճամբարում, ենթակա օրենքի կարգ ու կանոնին: Անատոլիայի նահանգը, սկսած Կ. Պոլսի ասիական մասից, հանդիսանում է նրանց բուն կենտրոնը, այն վայրը, որտեղ նրանք առաջին անգամ հաստատեցին իրենց թագավորությունը. սա թուրքերի մեծ մասի հայրենիքն է: Երբ նրանք վտարվեն ռազմական ներխուժումներով գրավված Եվրոպայից այս պատերազմի ավարտին, նրանց համար պետք է մնա Անատոլիայի այն տարածքը, որ բնակեցված է եղել թուրք ժողովրդով, մայրաքաղաք Կոնիայով: Սրանց պապերը 600 հարյուր տարի առաջ սուրը ձեռքին քառատրոփ արշավում էին այդ երկրում, և հենց այստեղ էլ ձևավորվեցին այդ ժողովրդի ավանդույթները: Այդ երկրում ստեղծվեցին նպաստավոր պայմաններ նրանց ցեղի բնականոն զարգացման և աճի համար, որ չկասեցվեց այդ ընդարձակ տիրույթի առանձնահատուկ պայմաններով: Սա է միակ ուղին լուծելու թուրքական հարցը և այս ուղիով էլ պետք է լուծվի:

Մերբերը և խորվաթները իրականում նույն ժողովուրդն են, միայն այն տարբերությամբ, որ խորվաթները կաթոլիկ են, իսկ սերբերը պատկանում են հունական եկեղեցուն: Խորվաթների երկրի սահմանը սկսում է Տրիեստի հյուսիսից, ունեն հիանալի համալսարան, նրանց հետ լրջորեն հաշվի են նստում, երբ հարկ է լինում արդարացիորեն որևէ հարց լուծելու՝ կապված Բալկանյան և հարևան երկրների ազգությունների հետ: Չերնագորիան բնակեցված է սերբիական ցեղերով՝ կապված լեզվով և կրոնով: Նրանք խիզախ լեռնականներ են և միակ քրիստոնյա ժողովուրդը Վիեննայից հարավ, որ երբեք չնվաճվեց թուրքերի կողմից: Այժմ նրանց երկիրը շրջապատված է ավստրիական ռազմական ուժերով: Կա՞ մի քրիստոնյա Ամերիկայում, որի սիրտը չցավի նրանց համար:

Փոքր, քաջարի սերբական թագավորությունը փաստորեն նվաստացրեց Ավստրիային այն աստիճան, որ գերմանական հորդան որպես հեղեղ ներխուժեց և ընկճեց սերբերին: Հալածված իրենց պապենական օջախներից, սերբական փառավոր բանակը նահանջեց և այժմ էլ վճռական, հզոր ուժով կռիվ է մղում այս մեծ պատերազմում վերադառնալու իրենց լքած օջախները: Ավերակված ու քայքայված երկիրը նրանց դարձրել է ավելի վճռական, ավելի անհողողող: Երբ արդարությունը հաղթանակի, նրանք պետք է ունենան մի քանի նավահանգիստներ Ադրիատիկի վրա: Բալկաններում երբեք խաղաղություն չի հաստատվի, մինչև սերբերը, խորվաթները, չերնագորցիները և բոսնիացիները չդառնան ինքնիշխան ժողովուրդներ, մինչև չստեղծվի արյամբ և լեզվով մի մեծ պետություն Հունգարիայի և Ադրիատիկ ծովի միջև ընկած հսկա տարածքում: Նրանք արժանի են այն բոլոր համակրանքին և արդարությամբ, որ մենք զգում և երազում ենք Բելգիայի համար:

Եթե Ֆրանսիան ու Անգլիան ողջամիտ ջանադրությամբ գործ ուղարկեին Սերբիա Սալոնիկի փոխարեն, եթե Իտալիան Անդրիատիկի վրայով գործ մտցներ Ալբանիա և Չերնագորիա, փոխարեն գրեթե անմատչելի՝ Իտալիայի և Տրիեստի միջև ընկած լեռները, դաշնակիցները այժմ արդեն Բելգրադում կլինեին

և հավանաբար բանակեին Վիեննայի դարպասների մոտ: Բելգիայի և Ֆրանսիայի սահմանների երկայնքով մղվող կռիվը պարզապես դարձել է հետազոտման, հետախուզման գոտի: 1917 թվականից ի վեր ամենամեծ ստրատեգիան, որ դաշնակիցները զարգացրել են, կասեցված հաղթանակի ճանապարհին, և այն օրվանից մինչև պատերազմը ստացել է տեղական բնույթ և չի երևում հավանական որևէ քայլ այս կամ այն կողմից: Սերբիայի միջով բացվում է ճանապարհը դեպի Ավստրիայի նվաճումը և վերջնական հաղթանակը Գերմանիայի հանդեպ: Եթե այդ գիծը պահպանվեր, Բուլղարիան երբեք չէր մտնի պատերազմի մեջ և թույլ տրված սխալի պատճառով հնարավոր դարձրին Սերբիայի պարտությունը: Բայց, այնուամենայնիվ, Արևելքում առկա է ելքը:

ԱՌԻԹԸ

Ըստ երևույթին Նիվելը՝ դաշնակիցների ռազմական տաղանդի մեծագույն դրսևորումը, որ կորուստների խուճապային չափազանության պատճառով կասեցվեց գերմանական դիրքերի ճեղքման ճանապարհին, շատ քիչ հնարավորություն տվեց վաղաժամ ճեղքելու գերմանական ռազմական գիծը, եթե Մեծ Բրիտանիան ռազմադաշտ դուրս չբերեր կես միլիոն զինվոր Բելգիայի ծովեզերքում կամ Գերմանիան հարձակվի Շվեյցարիայի վրա՝ Ամերիկային կստիպեր մեկ միլիոն մարդ նետել ռազմաճակատներ:

Եթե Բրիտանական հսկա նավատորմը չկարողանա հաջող հարձակում գործել գերմանական ծովեզերքի վրա, դա կնշանակի, որ ականները, ականակիրներն ու սուզանավերը ռազմանավերին գրկել են իրենց օգտակարությունից: Եթե սա փաստ է, նշանակում է, հնարավորություն չկա խորտակիչ հարված հասցնել Արևմտյան ռազմաճակատի որևէ մասում, կամ ծովեզերքում:

Բայց եթե Թուրքիան պարտվի, Բուլղարիան դուրս գա պատերազմից, մենք շփման մեջ կմտնենք Ռումինիայի հետ, և դաշնակիցները կարող են հաղթել Ավստրիային: Անգլիան գրավել է Բաղդադն ու Երուսաղեմը, ռուսները կռվով հասել են

Ասիական Թուրքիա՝ խորանալով մոտավորապես 160 մղոն, նրանք գրավել են Էրզրումը, մտել Սևծովյան նահանգատային Տրապիզոն քաղաքը, իսկ հարավում՝ Վանը: Ռուսներն այսօր իրենց գրավման տակ են պահում այս ամենը, հայերի երկիրը: Հայերն ունեն 35000 զինվոր, որոնք կռվում են իրենց երկրի համար: Մինչ ռուսական բանակը այս ճակատում քայքայվում է, հայերը Թիֆլիսում կազմակերպում են մի նոր բանակային կորպուս և նախատեսում են ռազմաճակատ հանել 150000 զինվոր՝ կռվելու իրենց հայրենիքի համար, թուրքերի դեմ: Նրանց կօգնի քրիստոնյա Վրաստանը, կովկասյան այդ ցուրտ երկրի ժողովուրդը: Այդ երկրի մայրաքաղաքն է Թիֆլիսը: Հայերը կարիք ունեն ֆինանսական օգնության, մի մեծ տերությունից: Հայերը և վրացիները Թիֆլիսից, անգլիացիները Բաղդադից և Երուսաղեմից կշարժվեն նույն նպատակով, Թուրքիան կքայքայվի, Բուլղարիան խաղաղություն կառաջարկի, Սերբիան կհառնի իր մոխիրներից, և հաղթանակը մեզ կողջունի:

ՀԱՅԵՐԻ ԵՐԿԻՐԸ

Երբ Նոյը կանգնեց Արարատի գագաթին, Հայկական լայնատարած բարձրավանդակը փռվեց նրա առաջ: Դեպի հյուսիս-արևելք նա տեսնում էր Արաքսի բարեբեր և գեղեցիկ հովիտը: Արաքսը հոսում է ավելի քան 150 մղոն դեպի Կասպից ծովը, դեպի հարավ-արևմուտք շողշողում էին Տիգրիս և Եփրատ սնող ջրառատ ակունքները, հովիտները, լեռներն ու լեռնաշղթաները, որոնք տարածվում էին դեպի Միջերկրական ծովը, Թալիսի ու Սիդոնի մոտերքում: Դեպի հյուսիս Սև ծովն է, հանրահայտ Տրապիզոն նավահանգստային քաղաքը, իսկ Պարսկաստանը տարածվում է հարավ-արևելքում: Մեր արիական նախահայրերը թողեցին ու հեռացան երկրագնդի տանիքը և Կասպիականի հյուսիսից թափանցեցին Եփրոսպա: Մեր հայ ազգակիցները, այդպիսին էլ կան այժմ, շարժվեցին Կասպիականի ափերով դեպի հարավ, ապա որոշ ժամանակ անց, հաստատվեցին Արարատի շուրջը, որտեղ նրանք ապրում են ավելի քան 3000 տարի և ոչ թե 311 տարի, երբ Ջոն Սմիթը ոտք դրեց Ջեմսթաուն:

Ներկայիս Հայաստանն արևմուտքից սահմանակից է

Անատոլիային՝ Թուրքական կայսրության ծննդավայրին, և հուսով ենք, որ այն նրանց վերջնական հանգրվանը կլինի: Դեպի հարավ ընկած են Պարսկաստանը, Քրդստանը, Միջագետքն ու Սիրիան: Թուրքերը բազմահազար քրդերի ցրել են Հայաստանով մեկ, իսկ հայերին դարեր շարունակ փտարել, հարածել են դեպի շրջակա երկրները: Հին Հայաստանի մեծ մասն այժմ մտնում է Ռուսաստանի մեջ՝ ներառյալ Արարատ լեռը, Կարսը, Երևանը, Արաքսի հովտի մի մասը և Էջմիածինը՝ հայ ժողովրդի կենտրոնը: Հայերի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների միջև ապրում են վրացիները՝ հայերի բարեկամները, դաշնակիցը և, ինչպես նախկինում, նրանց երկիրը տարածվում է դեպի Կովկասյան բարձրաբերձ լեռները, դեպի մեծ մայրաքաղաք Թիֆլիսը: Հայաստանի մի փոքր մասը գտնվում է Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում: Ի՞նչ է լինելու Պարսկաստանի և Ռուսաստանի հայերի վիճակը վերահաս անխուսափելի քայքայումից հետո, ոչ ոք չի կարող կանխատեսել: Հաղթանակող Թուրքիան կցանկանա ետ վերցնել Կարսն ու Ռուսահայաստանը: Վա՛յ նվաճվողին, վայ պարտվողին: Մի սերունդ հետո հայ ժողովուրդը կանհետանա, ինչպես Դրոդ թռչունը և առաջին քրիստոնյա ժողովուրդը կվերանա երկրի երեսից: Բաքուն, նավթային մեծ կենտրոնը, շրջապատված է 500000 թաթարներով, որոնք թուրքերի բարեկամներն են: Առողջ տրամաբանության տեր յուրաքանչյուր մարդ հասկանում է, որ գերմանացիների հարվածը ուղղված կլինի դեպի Բաքու նավահանգստային քաղաք Բաթումից: Թույլ տա՞նք, որ բուլշևիկները տեր դառնան նավթային այս բնական հարստության վիթխարի շտեմարանին, իսկ մեր ազգակից հայերին թողնե՞նք հոների և թուրքերի ողորմածությանը:

Ռուսահայաստանը տարածվում է գրեթե մինչև Թիֆլիս, որտեղ ապրում են 100000 հայեր, հրատարակվում է հայկական վեց թերթ, գործում հայկական մի քուլեջ: Երկու միլիոն հայեր ապրում են Ռուսաստանում, հավանաբար 1500000 Թուրքիայում, 100000 էլ Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում: Պատմության տարբեր ժամանակաշրջաններում նրանց իշխանության տակ է գտնվել մոտավորապես 500000 քառակուսի մղոն երկրամաս, որ տարածվել է Կասպիականից, Կովկասից,

Սև ծովից մինչև Միջերկրականի այն թևը, որ երկարում է մինչև Եգիպտոս: Այս բարձրավանդակում հայերը աճեցնում են ամեն տեսակի ընդեղեն, ամեն տեսակի կուլտուրաներ, որոնք աճում են Միացյալ Նահանգների հյուսիսում և հարավում, որովհետև առկա են կլիմայական նույն պայմանները: Ինչպես մենք, այնպես էլ նրանք, արտադրում են ցորեն ու բամբակ, նրանք երկրի ընդերքից արդյունահանում են պղինձ, երկաթ, ոսկի, արծաթ և բազմաթիվ այլ հանքատեսակներ: Այս երկրում առկա են բնական բոլոր տեսակի պաշարները, որոնք էական նշանակություն ունեն կայուն և կարևոր քրիստոնյա պետության համար: Այստեղ աճում են մեր երկրի բոլոր մրգատեսակները:

Հայերը հույս ունեն, որ իրենց երկրին կտրվի պրոտեկտորատի կնքագրվածակ, կատեղծվի պատշաճ ներկայացուցչական կառավարություն, և հայ մարդը կկարողանա իր երկրի տերը դառնալ, հասկանա, որ կվերագտնի իր կնոջն ու երեխաներին, իր տունը, կգնա աշխատանքի առանց գլխատվելու, երկաթուղագծեր կկառուցվեն Մերսինից, Ալեքսանդրետից մինչև Եփրատի հովիտը, մինչև Էրզրում և կմիանա ռուսական երկաթգծին մինչև Թիֆլիս, մինչև հարուստ Կասպիականի ափին գտնվող Բաքու քաղաքը, որն ունի 500000 բնակիչ, մինչև Բաթում և այստեղից դեպի Եփրոպական Ռուսաստան: Երբ այս բոլորը կատարվի ձեր աչքի առաջ, կբացվի չհետազոտված, չհայտնաբերված մի նոր Կալիֆոռնիա:

Վեհաշուք լեռների, խոշոր լճերի, հզոր գետերի այս երկրի ժողովուրդը, թող ձեզ զարմանալի չթվա, հազարավոր տարիներ հավատարիմ է մնացել իր հողին, իր պատմությանը և իր կրոնին, հակառակ իր կրած տառապանքին, ճնշումներին, որոնք իրենց չափերով աննախադեպ են ողջ պատմության մեջ, նույնիսկ Լեհաստանի անկումն ու Իռլանդիայի դժբախտությունները, որոնք մինչև օրս էլ շարժում են քրիստոնյա քաղաքակրթության կարեկցանքը, արտացոլվում են երգերի և պատմվածքների մեջ: Թող հայ բանաստեղծ Խորեն Նար Բեյ Լուսինյանը՝ դաստիարակված և կրթության ստացած Վենետիկի վանքում, իրենց կորցրած թագավորության ժառանգորդը, թող մի պահ խոսի ամերիկյան Կոնգրեսի դահլիճում:

(Ընթերցվում է Խորեն Նար Բեյի բանաստեղծությունը):

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԴԸ

Թիֆլիսում և Կովկասում ապրող երկու միլիոն հայութունը կարող ու արդյունավետ տարր է իր բարեկեցիկ ազարակներով, քաղաքատիպ ավաններով, քաղաքներով և դպրոցներով, նրանք մասնակցում են քաղաքական-հասարակական բոլոր միջոցառումներին: Թուրքական Հայաստանում երեք տարի առաջ ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր էին ապրում: Կա կարծիքների որոշակի տարբերություն հայերի կոտորածների թվի առնչությամբ: Ես կարծում եմ, ճիշտն այն է, որ նվազագույնը 500000 հայեր սպանված են՝ 1915թ. կոտորածների ժամանակ այս երկրում, թուրքերի և քրդերի կողմից: Նրանց նպատակն էր ջնջել, վերացնել հայ ազգը, որպեսզի տիրանան նրանց երկրին, նրանց ունեցվածքին և ոչնչացնեն քրիստոնեական եկեղեցին: Մենք շատ ենք խոսում Բելգիային հասած դժբախտությունների մասին, բայց ես վստահորեն կարող եմ հայտարարել Կոնգրեսին, Հայաստանը տառապել է հարյուր անգամ ավելի, քան Բելգիան: Սուլթանը ոչնչացնում էր փոքր ազգերին շատ ավելի վաղ, քան Կայզերը: Հարյուրավոր տարիներ այս կոտորածը շարունակվում է առավել կամ նվազ չափերով: Կույսերի պատվազրկումը, կանանց բռնաբարումը, տղամարդկանց սպանությունները, ծերերի գազանաբար մորթոտումը, ժողովրդին հավաքել ու լցնել հայկական եկեղեցիներում և այրել, գողանալ, հափշտակել նրանց ունեցվածքը, այրել նրանց կահ-կարասին, քշել, տանել այն, ինչ որ մնացել էր նրանց տներում, առօրյա դեպքեր են Հայաստանում: 1914թ. ի վեր այսպես տառապել են հարյուր-հազարավորներ: Ես կերկմտեի նման հայտարարություն Կոնգրեսի այս դահլիճում կատարել, եթե բացարձակապես համոզված չլիների իմ հայտարարության մեջ:

Թուրքերը իրենք, ինչպես ձեզ հայտնի է անշուշտ, գաղթել են Մոնղոլիայից: Նրանք բացարձակապես ոչինչ չեն սովորել այն ժամանակից ի վեր, երբ տեղափոխվեցին այս տարածքը որպես ռազմիկներ և նվաճողներ, այլապես ուրիշ ոչինչ: Նրանց համար հարկահավաքը արկածախնդրություն է, կառավարել չգիտեն, բացի մորթելուց ու մորթոտելուց: Այդպիսին է

կառավարման մասին թուրքերի ընթացումը (ծիծաղ):

Մի գերմանացի կա, անունը Լեփսիուս: Նա մի գիրք է գրել, թույլ տվեք մի հատված մեջ բերել այդ գրքից: Լեփսիուսի մոտեցումը անկողմնակալ է ու անշահախնդիր: Ես հավատում եմ, որ նա չի խեղաթյուրել փաստերը: Նա ասում է.

«Թե ինչ ձևով են թուրքերը Հայաստանում մարդկանց մեղադրում և բանտարկում, հեշտությամբ կարելի է եզրակացնել այն բանից, ինչ որ ասվեց: Դրամ, տավար, եգիպտացորեն (ցորեն), հող, կին կամ դուստր ունենալը բավական է, որ թշնամի ունենաս: Մենք ցնցվեցինք, երբ կարդացինք վայրենի քրդերի գազանությունների մասին, որոնք ասպատակում են այս կամ այն գյուղը, հարձակվում տների վրա, թալանում հայ գյուղացու ոչխարը, հափշտակում ունեցվածքը, պատվազրկում կանանց և հանգիստ խղճով վերադառնում տուն՝ այն զիտակցությամբ, թե լավ գործ են կատարել այդ օրը: Մենք այդ անվանում ենք անպատվություն քաղաքակրթության հասցեին, և հավանաբար այդ որակումը, բնութագրումը ճիշտ է: Բայց ինչքան էլ արգահատելի են չի, դա օրհնանք է, երբ համեմատում ենք թրքական մեթոդների հետ, որոնք հիմնվում են օրենքի ուժի և բանտային սարսափի վրա: Հայ մարդը, որ աղքատության ու սովածության պատճառով չի կարողանում վճարել երևակայական հարկը և հրաժարվում է ձեռք քաշել իր կովից կամ գոմեշից, որպես նվեր զարթիեին և աղաչում, խնդրում է խնայել կնոջ կամ աղջկա պատիվը, այդպիսիներին նետում են տեղի զնդաններից մեկը, որտեղից նա այլևս դուրս չի կարող գալ»:

Ցավում եմ ասելու, որ այս հարցի վերաբերյալ փաստերն ու ապացույցները այնքան ամոթալի ու խայտառակ, այնքան ստորացուցիչ, այնքան սահմոկեցուցիչ են, որ պատշաճ չէ գրանցել Կոնգրեսի արձանագրության մեջ կամ այստեղ նշել: Գերմանացի Լեփսիուսը փիլիսոփայության դոկտորի աստիճանը ստացել է Բեռլինի համալսարանում, իսկ նրա գիրքը թարգմանել է Օքսֆորդի համալսարանի գիտական ընկերության անդամներից մեկը, այնպես որ ես կարծում եմ թարգմանության մեջ որոշ մեղմություն է մտցված:

Ավելի քան քառասուն տարի առաջ բուլղարական հիսուն գյուղեր ոչնչացվեցին բնակիչներով հանդերձ: Մոտավո-

րապես իննսուն տարի առաջ Քիոս և հունական այլ կղզիների բնակչության կոտորածը թուրքերի կողմից սոսկալի էր, բայց ոչ մի համեմատություն նրա հետ, ինչ որ եղել է Հայաստանում: 1915թ. հարյուր-հազարավոր մարդիկ մորթվեցին, հարյուր-հազարավոր կանայք անպատվվեցին: Կոտորածն ու ջարդը հաճախ սկսվում է շեփորների ազդանշանով: Հարյուր-հազարավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, բոլորն էլ բարի ու ազնիվ ընտանիքներից, դուրս էին քաշում և ստիպում էին քայլել առանց սննդամթերքի կամ ուտելիքի անհայտ ուղղություններով՝ դեպի բնաջնջում, դեպի ոչնչացում. Բազմաթիվ կանայք նետվեցին Եփրատ գետը՝ անպատվությունից փրկվելու համար: Մի քանի տարի առաջ Ուրֆա քաղաքում երեք հազար հայ հավաքեցին, լցրին եկեղեցում ու կրակ տվին: Վերջին մի քանի տարիներին դրությունը այնպիսին էր, որ դժոխքն ավելի լավ ապրելավայր էր, քան Հայաստանը, դժոխքում չեն պատվազրկում կանանց: Ես չեմ կարծում, որ հայերի ոչնչացումն օգուտ կբերի քաղաքակրթությանը, ես չեմ հավատում, որ այդ կայսրությանը ապահովություն կբերի, քանի որ միակ ազգն է, որ ընդունակ է կառավարելու և զարգացնելու, հետևապես այդ ազգը չպետք է արմատապես բնաջնջվի կամ տեղահանվի: Նրանք՝ թուրքերը, չեն կարող ստեղծել աշխատանքային համայնքներ այս եղանակով, չեն կարող երկիրը զարգացնել այդպիսի գործելակերպով: Բելգիայի բռնաբարումը, Սերբիայի դեմ կատարված ոճրագործությունը, Ռուսաստանի քայքայումը սարսափի են մատնել աշխարհը, բայց նույն աշխարհը զարհուրած ոտքի կկանգներ, եթե գիտենար, թե ինչ է կատարվել քրիստոնյա Հայաստանում: Վրե՛ժ, կկոչեր Տերը:

Հայերը հիանալի ժողովուրդ են: Արևելքում կա մի առած, որ հաճախ կրկնվում է: Երկու հրեա է պետք, որ մի հույն խաբի, երկու հույն է պետք, որ մի հայ խաբի, նշանակում է, ինչպես հասկանալի է, նրանք մակարդակի և խելքի տեր ժողովուրդ են, առածը այդ է հաստատում: Հայաստան կոչվող այս տարածքում ապրում է հայ ժողովուրդը, նրա սահմանները հասնում են մինչև Ռուսաստան, մինչև Կովկաս (ցույց է տրվում քարտեզի վրա), մեծամասամբ զբաղվում է գյուղատնտեսությամբ, նրանք հողագործներ են և անասնապահներ: Եթե ի-

րենց երկրում գրադվում են երկրագործությամբ, օտար երկիր գաղթելիս օգտվում են հնարավոր ամեն մի առիթից: Դարեր շարունակ հայերը հանդիսացել են Սուլթանի ֆինանսական հարցերի խորհրդատուները: Նրանք առաջնակարգ, բարձր մակարդակի վաճառականներ և բանկիրներ են: Օսմանյան կայսրության առևտրի ու բիզնեսի մի խոշոր մասը նրանց ձեռքում է, ոչ թե թուրքերի կամ այլոց: Նրանց նախանձելի ջանասիրությունը, գործիմացությունը, առողջ դատողությունը, առևտրա-գործարքային ձեռնարկություններ զարգացնելու նրանց ընդունակությունները, այս բոլոր բացարձակ հավաստիացումն են, որ եթե քրիստոնյա աշխարհը թիկունք չկանգնի թուրքերին ու քրդերին, որոնք թվաքանակով գերազանցում են հայերին, կամ զենք ու ռազմական հանդերձանք տրամադրվի նաև հայերին այնքան, որքան նրանց թշնամիներին, որոնց ներկայումս անգլիացիները վտարում են Բաղդադից ու Երուսաղեմից, նրանք՝ հայերը, ոչ միայն ձեռք կբերեն իրենց անկախությունը թուրքական լծից, այլև կզարգացնեն մի հիանալի երկիր, որ ոչ մի ժողովրդի չի հաջողվել երկրագնդի երեսին՝ խաղաղության և բարգավաճման պայմաններում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՉՈՐՔԸ

Հավաստի աղբյուրից ես տեղեկացել եմ, որ այս պատերազմը սկսելուց ի վեր, հայերը ունեցել են 150000 զինվոր ռուսական բանակում, որոնք կռվել են մեզ հետ: Նրանք չլքեցին, տուն չվերադարձան, ինչպես բուլղարները: Ռուսական բանակի 35000 հայ զինվորները շարունակեցին կռվել թուրքերի դեմ Հայաստանում: Այդ զորքի մի մասը կամավոր է, և հակառակ ռուս զինվորների նահանջին, հայերը շարունակում են կռվել: Ռուսներն ու հայերը պատերազմի առաջին օրերից ներթափանցեցին այս սահմանագիծը, որ ես ցույց եմ տալիս, գրավեցին Տրապիզոն մեծ նավահանգստային քաղաքը և շարժվեցին դեպի արևմուտք: Այդ քաղաքը ռուսները պահում են իրենց ձեռքում, որ գտնվում է 160 մղոն ռուսական նախապատերազմյան սահմանից դեպի Հայաստան, Թուրքիա: Նրանք գրավել են նաև Վան քաղաքը հարավում և մի ընդարձակ երկրամաս:

Անգլիացիները գրավել և իրենց ձեռքում են պահում դեպի հարավ ընկած մի լայնածավալ երկրամաս, մինչև Բաղդադ, մինչև Երուսաղեմ: Թուրքերը չեն փորձում հայերին և ռուսներին դուրս քշել: Այժմ վիճակը անփոփոխ է մնում այստեղ, արևմտյան ճակատում: Բայց շատ չի անցնի, գերմանացիները կանցնեն գործողությունների, ռուսները կլքեն ճակատը, իսկ հայերը ստիպված կլինեն նահանջել գերազանց ուժի առաջ դեպի Էրզրում, մինչև ռուսական սահմանը, որտեղ նրանք, անկասկած, կդիմադրեն թուրքերին:

Եթե ռուսական բանակում կռվող հայկական ամբողջ զորքը տեղափոխվի Հայաստան, այդ զորքը կարճ ժամանակում կկանգնի Կ. Պոլսի դարպասների առաջ: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սա ռազմական նկատառում է՝ արժանի որոշ քննարկման, մտորման: Գերմանական ռազմական մասնագետները ներխուժեցին անպաշտպան Բելգիա առանց երկար մտածելու, ռազմական վիթխարի պատրաստությունից հետո, բայց Մառնի ճակատամարտում, որ եղավ առաջինը և միակը, նրանց ստիպեցին ճակատելու հարթ դաշտավայրում, մի կարևոր ճակատամարտ, որ մղվում էր առանց դիրքերի՝ երկու կողմի համար էլ: Ջոֆերը (Մառնի ֆրանսիական ցամաքային բանակի հրամանատարը) ամուր կանգնեց, գերմանացիները չկարողացան առաջ շարժվել: Ֆոշը ճեղքեց գերմանացիների ճակատը կենտրոնից, որտեղ մասնագետները սխալվել էին: Ֆրանսացիները դուրս քշեցին գերմանացիներին 50 մղոն, որից հետո նրանք դադարեցին նահանջը, բայց խրամատավորվելուց հետո պաշարումը շարունակվում էր երկար ժամանակ: Դաշնակիցները տանուլ տվեցին Իտալիայում, Սերբիայում, Կ. Պոլսի մոտերքում, իսկ ռուսական բանակը հաղթականորեն մտավ գերմանական և ավստրիական սահմաններից ներս, 160 մղոն խորացավ Թուրքիայում: Մեր միակ հաղթական առաջընթացը եղավ դեպի Բաղդադ և դեպի Երուսաղեմ: Հայերը, Ռուսաստանի ներքին կյանքի վատթարացումից հետո, Թիֆլիսում կազմակերպել են 50 հազարանոց բանակային կորպուս Նազարբեկովի՝ մի փորձառու հայ զեներալի հրամանատարության տակ: Իրենց քրիստոնյա հարևանների՝ վրացիների օգնությամբ նրանք մտադիր են ավելացնել և զենքի տակ ունենալ

150000 մարդ թուրքական սահմանի վրա: Անդրկովկասում այս ժողովուրդները մնացել են մենակ կռվելու թուրքական կիսով չափ բարոյագրկված բանակի դեմ: Եթե նրանք կարողանան կազմակերպել և ճակատ դուրս բերել ու պահպանել այսպիսի մի բանակ, նրանք շուտով կսեղմեն Կ. Պոլսի կոկորդը, և, Կոնգրեսի ջենտլմեններ, այդ ճանապարհի վրա է գտնվում հաղթանակը: Հայերը միշտ էլ եղել են հիանալի զինվորներ:

Բաքվի փողոցներից մեկում մի ոռու սպա բոթբոթում է կոշկակար հայ Լազարեին, ասելով. «Հեռացիր ճանապարհից, կեղտոտ հայ»: Լազարեը նրան պատասխանել է. «Ես քեզ ցույց կտամ իմ կեղտոտ հայ լինելը»: Անմիջապես կամավոր մտնում է զինվորական ծառայության մեջ և շուտով հասնում գեներալի աստիճանի, դառնում ռազմավարության իսկական տաղանդ. նա բերեց 1877-78թթ. ոռու-թուրքական պատերազմի հաղթանակը Ռուսաստանի համար՝ Կարսի ու Էրզրումի պատերի տակ:

Լորիս Մելիքովը ծնվել է Հայաստանում, հայ ընտանիքում, անցյալ դարի 20-ական թվականներին և ծառայել է ոռուսական բանակում: Ռուսաստանը վերջին հարյուր տարվա ընթացքում չի ծնել մի այլ անհատականություն, որ գերազանցեր նրան թե՛ որպես զինվորական և թե՛ որպես քաղաքական գործիչ: Նա էր հրամանատարը ոռուսական այն բանակի, որտեղ ծառայում էր Լազարեը, որ պարտության մատնեց թուրքական բանակին 1878թ., և որպես գորավար ցուցաբերած իր տաղանդի և իմ բարեկամ Մուխթար փաշային պարտության մատնելու համար նրան շնորհվեց գեներալ լեյտենանտի աստիճան: Նա մեծատաղանդ էր որքան ռազմական, նույնքան և քաղաքացիական հարցերում: Լինելով վեց նահանգների նահանգապետ, նա մտցրեց երդվյալ ատենակալների դատական գործընթացը: Որպես Ռուսաստանի ներքին գործերի նախարար, նա ձեռնարկեց ժառանգականության, հարկային համակարգի և հատկապես գործարանային բանվորության պաշտպանության գործը, ինչը վերջիվերջո ստացավ օրենքի ուժ: Նա առաջադիմական մեծ գաղափարների տեր էր, չքավորների և ճնշվածների բարեկամը և 37 տարի առաջ նա դարձավ Ռուսաստանի երկրորդ մարդը ցարից հետո և փաստորեն Ռուսական կայսրու-

թյան դիկտատորը:

Ես արդեն պատմեցի Նուբար փաշայի մասին, որն իր քաղաքական կենսագրությունը սկսել էր անցյալ դարի 40-ական թվականների սկզբից, որպես Մոհամադ Ալիի՝ Եվրոպայից և Ամերիկայից դուրս մեծագույն իշխողի քարտուղարը: Ծնվել է Չմյուննիայում, գաղթել Եգիպտոս, որպես հայ ապրել արաբների մեջ, որպես քրիստոնյա մահմեդականների շրջապատում և իր վառ անհատականության ու տաղանդի շնորհիվ բարձրացել և դարձել է ուժ մեծն Իբրահիմ փաշայի իշխանության օրոք, դարձել գլխավոր խորհրդականը և բազմաթիվ անգամներ գրավել վարչապետի աթոռը, փաստորեն դառնալով երկրի մեծագույն իշխանությունը: Հայերը ոչ միայն Օսմանյան կայսրությանն են տվել զեներալներ, քաղաքագետներ, այլև նրանք այդպիսին են եղել նաև Բյուզանդական կայսրության ժամանակ: Ավելի քան հազար տարի առաջ հայերը բազմել են Արևելյան կայսրության գահին Կ. Պոլսում և կառավարել հաջողությամբ ու արժանապատվորեն:

ԽՐԻՍՅԱՆ

Հայերը որքան որ աչքի են ընկնում արվեստի և գրականության ասպարեզում, նույնքան էլ ռազմական գործի և պետության ղեկավարման բնագավառում: Զառորդ դար առաջ հենց աշնանն էր, որ ես մեկնեցի Ռաս-էլ-Թին պալատը, որի աստիճանասանդուղքը ողողվում է Միջերկրականի ջրերով, հրաժեշտ տալու երիտասարդ միապետին, որի հորեղբայրը այժմ Եգիպտոսի Սուլթանն է: Ես նրա կառավարությանը պետք է ներկայացնեի իմ դիվանագիտական հավատարմագրերի փաստաթղթերը: Երբ ես մտա արքայական պալատը, ինձ դիմավորեց բարձրահասակ, երկարամորուս, հզոր ու փառահեղ մի հոգևորական իր շքախմբով: Հաջորդ առավոտյան ավստրիական «Լոյդ» շոգենավով նավարկեցինք Տրիեստ: Այդ հոգևորականը Մկրտիչ Խրիմյանն էր, հայ եկեղեցու կաթողիկոսը: Նա հայ հոգևորականների շքախմբով, Թիֆլիսից ժամանած ականավոր հայերի և տեղեկատվական միջոցների խմբագիրների ուղեկցությամբ գնում էր Էջմիածնի վանքը, որ

գտնվում է Արարատ լեռան ստորոտում: Նա իր կյանքի վերջին տարիները անցկացրեց որպես հայ ժողովրդի առաջնորդ: Էջմիածնում սուրբ Գրիգոր Լուսավորիչը հիմնել է կրոնական այս կենտրոնը 16 դար առաջ, երբ նա կրոնափոխ արեց հայ ժողովրդին ամբողջ աշխարհում, քայց այդ օրվանից սկսեց հայ ժողովրդի մարտիրոսության ժամանակաշրջանը, որ շարունակվում է մինչև օրս, և կշարունակվի, եթե նրանք օգնություն չստանան աշխարհիս քրիստոնյա ամենամեծ հանրապետությունից: Խրիմյանը, հենվելով իր ժողովրդի իրավունքների վրա, դիմադարձ է կանգնել ծեր Սուլթան Համիդին, իսկ վերջինս հրավիրել է իր մոտ և ասել. «Հայր, երբևէ դու եղե՞լ ես Երուսաղեմ ուխտի»: Խրիմյանը պատասխանել է. «Այո, Չերդգերազանցություն, երիտասարդ տարիներիս» «Ա՛, – ասել է քաղաքավարի Սուլթանը, – ես կարծում եմ, որ դու կրկին կցանկանայիր գնալ ծերության տարիներին»: Նա համաձայնեց ապրել սուրբ քաղաքում որպես արքայական: Հայերը դեմոկրատ ժողովուրդ են, իրենք են կառավարում իրենց եկեղեցին, և 1892 թվականին հայ ժողովուրդը Խրիմյանին որպես ամենարժանավորի ընտրեց առաջնորդ, ցարը հաստատեց: Երբ ես ճամփորդում էի նրա հետ, նա մեկնում է իր ապագա նստավայրը՝ Էջմիածին:

Խրիմյանը ծնվել է Հայաստանում, առևտրականի ընտանիքում: Լինքոլնի նման նա էլ բարձրացել է իր ժողովրդի ամենահասարակ խավից ամենաբարձր պատվի՝ արժանանալով իր ժողովրդի հիացմունքին և սիրուն, իր անձնական ջանքերի և գոհողության շնորհիվ: Նա եղավ առաջինը, որ 1865թ. տպագրական մեքենա բերեց Հայաստան, դարձավ ուսուցիչ, հեղինակ, բանաստեղծ, առաջնորդ և քաղաքական գործիչ: Համընդհանուր գովք ու գովասանքի պայմաններում նա ճանաչվեց իր ժողովրդի Մեծ Հայր: Նա դուրս եկավ խավարից՝ առաջնորդելու իր ժողովրդին, իր բաժին ընկած լուծման ներդնելու քրիստոնեական քաղաքակրթության մեջ: Բեռլինի Կոնգրեսի պայմանագրում նա ձեռք բերեց մի համաձայնություն, որով ապահովվում էր հայերի իրավունքները Եվրոպայի մեծ տերությունների կողմից, և Թուրքիան համաձայնեց: Այդ օրվանից հայերին հասած բոլոր դժբախտությունների պատճառը եղավ

այն, որ աշխարհի քաղաքակիրթ ազգերը մոռացան իրենց ստորագրությունները, չպարտադրեցին Թուրքիային հարգելու պայմանագրի պարտավորությունները, հայերի հետ վերաբերվելու ավելի մարդավայել, որ եթե հայ մարդը ձեռք է բերել ունեցվածք, կարողանա տեր կանգնել, եթե կին ունի, կարողանա պահել: Նա ձգտում էր իր երկրի, իր հնագույն ազգի, իր քրիստոնյա ժողովրդի՝ բոլոր ժամանակներում ամենից շատ ճնշված, ոտնակոխ եղած ժողովրդի համար ձեռք բերել օրենք, կարգ ու կանոն, անվտանգություն և ապահովություն, կրթություն և ազատություն, որ ամեն մի ամերիկացի վայելում է: Նա իսկապես հավատում էր կյանքի, ազատության և երջանկության հետամուտ լինելը ամեն մի հայի իրավունքն է: Խրիմյանի վեհ ու վսեմ հոգին, հզոր սիրտը բարձրացավ և հավասարվեց երրայական մարգարեներին, իսկ իր հուշագրությունների մեջ նա հառնեց որպես կռվի դաշտում զոհված հերոս, որտեղ նա մարգարեական կանխատեսումով ասում է.

(Բերված է բանաստեղծությունը):

– Նախագահը. – Ելույթ ունեցող ջենտլմենի ժամանակը սպառվել է:

– Պրն Կուպեր. – (Վիսկոնսին նահանգ) Տրամադրված ժամանակից քիչ անցել է, ես կարծում եմ՝ 10 րոպե ևս կարելի է զիջել:

– Պրն Պլատ. – Մի հարց կարելի՞ է:

– Պրն Լիտլ. – Այո, խնդրեմ:

– Պրն Պլատ. – Վերջերս ես կարդում էի «Նյու Յորք Թայմզ» թերթը, կարծում եմ, կամ մի այլ թերթ, որը հայտնում է, որ Ռուսաստանի Մեծ Իշխան Նիկոլայի բանակը Հայաստանում անհետացել է, չկա, անցյալ հուլիսից մինչև օրս ոչինչ չի լավել այդ մասին, արդյոք պարոնը կարո՞ղ է հաստատել դա:

– Պրն Լիտլ. – Ո՛չ, դա ճիշտ չէ: Հուլիս ամսից այս կողմ ես լսել եմ այնպիսի մարդկանց, որ այնտեղ են եղել: Այստեղ, այս րոպեին, որ ես ելույթ եմ ունենում, ճեմասրահում ներկա է մի մարդ, որ եղել է 4000 հայ կամավորների հետ, որոնք ռուսական բանակի հետ կռվել են Երևանից մինչև Վան և մասնակցել է այն ճակատամարտին, որը 1915թ. հաղթություն բերեց ռուսական բանակին: Ամբողջ ապրիլ ամիսը հայերը ճակատել են

թուրքերի դեմ միայնակ և հատթել:

– Պրն Պլատ. – Ուրեմն կասկած չկա, որ ռուսական բանակը Հայաստանում է:

– Պրն Լիտլ. – Օ՛, ոչ, ինչպես ասացի, քիչ առաջ, ռուսներից շատերը վերադարձան տուն, բայց 35000 հայեր պահում են ռազմաճակատային գիծը, նրանց հետ կան նաև ռուսներ, ռազմաճակատը այժմ ձգվում է 160 մղոն թուրքիայում:

– Պրն Պլատ. – Ռազմամթերք ունե՞ն, քիկունքից նրանց օգնություն հասնո՞ւմ է:

– Պրն Լիտլ. – Նրանք ուտելու ինչ-որ չափով սննդամթերք ունեն: Նրանք կշարունակեն մնալ այնտեղ: Ես չեմ կարող ասել, որ նրանք այնքան լավ են կերակրվում, ինչպես մեր բանակը: Բայց, այնուամենայնիվ, նրանք լավ չեն մատակարարվում:

– Պրն Օստին. – Կարո՞ղ է ասել, հարգելի ջենտլմենը, թե հայերի նկատմամբ կատարված հալածանքը թուրքիայում եղել է միայն կրոնական հողի վրա:

– Պրն Լիտլ. – Թուրքերն ասում են՝ ոչ, և ես կարծում եմ, որ բազմաթիվ մասնագետներ նույնպես այդ կարծիքին են: Գլխավորապես դա առաջանում է կրոնական տարբերությունից: Ըստ Ղուրանի ճշգրիտ մեկնաբանության, յուրաքանչյուր քրիստոնյա օրենքից դուրս է հայտարարվում և կարելի է նրան սպանել անմիջապես, հանդիպելուն պես: Սա իրավունք է տալիս նրանց՝ մուսուլմաններին, վնասելու կամ սպանելու քրիստոնյային: Քուրդը կարող է գողանալ հայի կնոջը, կամ սպանել մի հայ և մնալ անպատիժ: Օրինակ, երբ հայը տեր է դառնում մի փոքր ունեցվածքի, քուրդ ասպատակը կամ թուրք հարկահանը կարող է հափշտակել: Եթե նրանք մուսուլման լինեին, սա տեղի չէր ունենա: Հաճախ նրանց առաջարկվում է հրաժարվել իրենց հավատքից, կրոնից և պահպանել իրենց ունեցվածքը, տղամարդը՝ իր հողամասն ու կյանքը, կանայք՝ իրենց պատիվը: Քրդերը գիտեն՝ ինչպես ցանկանան, այնպես էլ կարող են վարվել քրիստոնյա հայի հետ:

Այդպես են հասկանում քրդերը: Մեկ ու կես միլիոն քուրդ այստեղ (ցույց է տրվում քարտեզի վրա): Ես կարծում եմ, երբ պատերազմը ավարտվի, և մենք՝ ամերիկացիներս, տարածենք

բավարար չափով պատշաճ ապրելակերպ աշխարհում, քրդերին, որոնք Եվրոպայի ապաշիններն են, պետք է զինաթափել, առանձնացնել և տեղավորել ռեզերվացիաներում: Եթե Բելգիայից առանձնացնեք 50000 գերմանացի զինվոր, տեղափոխեք նրանց քրդերի երկիրը, բաց թողենք նրանց հետ ապրելու, շուտով նրանք իրար լեզու կհասկանան (ծիծաղ):

– Պրն Ռամսեյեր. – Դուք խոսում եք երկու միլիոն հայերի մասին ռուսական տիրապետության տակ:

– Պրն Լիտլ. – Այո:

– Պրն Ռամսեյեր. – Ինչպես են ռուսները վերաբերվում հայերին: Արժանանո՞ւմ են լավ վերաբերմունքի:

– Պրն Լիտլ. – Օ՛, այո: Ընդհանրապես այդպես է: Բայց մի քանի տարի առաջ ռուսական ցարը ինքնական հայոց եկեղեցու առաջնորդ նշանակեց մի կաթողիկոսի:

Այդ տարիներին ցարը լավ չէր վերաբերվում հայերի հետ, բայց դա կարճ տևեց: Քառորդ դար է, ինչ հայերը աճում ու զարգանում են Ռուսաստանում: Կաթողիկոսը մեծապես հարգված է ռուսների կողմից: Երբ մեր նավը մտավ Տրիեստ նավահանգստային քաղաքը, ավատրիացիները բարձրացրին ամերիկյան և ռուսական դրոշակները, ամերիկյան դրոշը՝ ի պատիվ նավի վրա գտնվող ամերիկյան քաղաքացու, իսկ ռուսականը՝ ի պատիվ Խրիմյանի՝ նա կրում էր ռուսական իշխանի աստիճան: Երբ մենք անցնում էինք Իթաքիայի Յուլիսիս կղզու մոտով, նա ինձ նվիրեց իր լուսանկարը, որ այժմ իր պատշաճ տեղն ունի իմ գրադարանի գրասեղանի վրա: Նա հայերեն մի բանաստեղծություն է գրել իր լուսանկարի տակ, ահա այդ.

Թեև իմ մարմինը կկորնչի փոշու մեջ,

Թեև իմ հոգին կհամբառնա դեպի երկինք,

Իմ փոխանձը կմնա ձեզ հետ:

Բոլոր այն մեծ մարդկանց հետ, որ ես ծանոթացել եմ, գուցե իր ժողովրդի յուրահատուկ իրավիճակի պատճառով, ոչ մեկի ծանոթությունը ինձ համար այնքան հուզումնալի ու գրավիչ չի եղել, որքան Խրիմյանի: Նա մեծ ու հիանալի մարդ էր, Արևելքի վերջին մարգարեն ու հոգևորականը, այդ բնագավառի արժանի անհատականություն: Այսօր, եթե ես որոշեցի ելույթ ունենալ ձեր առաջ, մասամբ պատճառը Խրիմյանն ու

նրա մասին իմ հիշողություններն են: Նա բաղձանք ուներ դիմելու արևմտյան քրիստոնյաներին, ցանկություն էր հայտնում, որ ես հաղորդեմ իր պատգամները: Հայ եկեղեցու առաջնորդն ապրում է Ռուսաստանում, նրա աթոռը գտնվում է Արարատ լեռան ստորոտում: Բոլշևիկների իշխանության տակ զուցե բոլշևիկները ցանկանան, որ Անդրկովկասի հայերը մասկազմեն ինքնավար այն Հայաստանի, որի մասին ես խոսում եմ: Գուցե ցուցաբերեն որոշակի հակվածություն թույլ տալու այդ տարածքում ամեն մեկին շարժվել ըստ իր հայեցողության, հավանաբար նրանք հայերի նկատմամբ այդպես վարվեն (ծիծաղ) և կամ նրանց թողնեն քրդերի և թուրքերի կամքին:

– Պրն Թիլսոն. – Պրն նախագահ, կարելի է մի հարց պրն. զեկուցողին:

– Պրն Լիտլ. – Այո, խնդրեմ:

– Պրն Թիլսոն. – Ջենտլմենը մի բուպե առաջ պատմեց այս ժողովրդի արժանավորության և կարողունակության մասին: Թող պարոնը բարեհաճի իր նկատառումներից մի քանիսը նշել նախքան իր խոսքի ավարտը:

– Պրն Լիտլ. – Խնդրեմ, ահա այստեղ (ցույց է տրվում քարտեզի վրա), այս կանաչ գիծը ամենահեռավոր սահմանն է, որ ռուսական բանակը թափանցել է Թուրքիայում: Ռուսները պատերազմը սկսելուց անմիջապես հետո երկաթուղի կառուցեցին Կարսից մինչև Էրզրում: 1915 թվականից ի վեր նրանց իշխանության տակ գտնվում է նաև Վանը: Այստեղ, Վանում, հայերը կռվել են մեկ ամիս թուրքական 20000 բանակի դեմ:

Ներկա պատերազմում հայերը ռուսական բանակին տվել են 160000 զինվոր, որից 10000-ը զոհվել է: Այս զորքից մոտավորապես 35000-ն այժմ կռվում է թուրքական ճակատում՝ Տրապիզոնից մինչև Երզնկա, մինչև Վան: Թիկունքում՝ Թիֆլիս քաղաքում հայերը կազմակերպում են մի նոր զորաբանակ և հավանաբար այժմ նրանք զենքի տակ ունեն 10000 կռվող ուժ Կովկասից մինչև Երզնկա: Ներկայումս Ռուսահայաստանում և Կովկասում կա 3000000 հայ, նրանք կարող են ավելացնել իրենց ռազմական ուժը մինչև 150000-ի՝ կռվելու թուրքերի դեմ և պահպանելու իրենց ռազմական ճակատային գիծը: Վրաստանում ապրում է մեկ և կես միլիոն վրացի, նրանց երկրի մայրա-

քաղաք Թիֆլիսն ունի 250000 բնակչություն, որից 100000-ը հայեր են: Վրացիներին սպառնում է նույն վտանգը, ինչ որ հայերին: Ռուսական բանակի քայքայումից հետո 50000-անոց բանակ ռազմաճակատի համար: Այսպիսով՝ կկազմակերպվի 200000-անոց մի բանակ թուրքական ճակատում Նազարբեկովի հրամանատարության տակ, որը ռուսական բանակի հայ վետերան գորահրամանատարն է: Ռուսները կառուցել են երկաթուղի Թիֆլիսից մինչև Էրզրում: Հայերը ավելի լավ վիճակում են, քան թուրքերը պահպանելու իրենց բանակը Հայաստանում: Թուրքերը գտնվելով ավելի հեռու իրենց մատակարարման կենտրոններից և երկաթուղու բացակայության պայմաններում, մեծ դժվարությամբ են տեղափոխում հարկ եղած զորքն ու ռազմամթերքը Եփրատից և կամ ծովերից, նշենք նաև, որ երկիրը լեռնային է: Թուրքերն այդ ռազմաճակատում ուժեղ չեն, եթե լինեին, նրանք կշարժվեին դեպի Թիֆլիս՝ նկատի ունենալով ռուսական բանակի կազմալուծումը: Թուրքերը ստիպված են պահպանել ռազմաճակատը անգլիացիների դեմ Երուսաղեմում և Բաղդադում, միաժամանակ պաշտպանել նաև ծովեզերքը Ալեքսանդրետում և Չմյունհիայում՝ անգլիական ծովային ուժերի դեմ: Այսպիսի պայմաններում անհավանական է, որ թուրքերը նշանակալի ուժեր տեղափոխեն հայկական ռազմաճակատ:

Հայկական այսպիսի բանակի համար, իմ դատողությամբ, ոչ մի արգելք չի լինելու գրավել Տիգրիսի վրա գտնվող Մոսուլ քաղաքը: Ամիսներ առաջ նրանք կռվում էին այդ քաղաքից 60 մղոն հեռավորության վրա: Հետագայում նրանք կմիանան Բաղդադից դեպի հյուսիս արշավող անգլիական բանակին և կշարժվեն դեպի Միջերկրական ծով՝ Ալեքսանդրետի մատույցները: Արդյունքը կլինի թուրքական բանակի վերջնական կործանումը, որը ջանքեր է թափում կասեցնելու արաբական առաջխաղացումը: Հայեպի և Դամասկոսի անկումից հետո միացյալ բանակը Անատոլիայի միջով անցնող երկաթուղիով կհասնի մինչև Կ. Պոլիս: Եթե ռազմավարներն ավելի ճիշտ կշռադատեն, 200000-անոց այս բանակը Էրզրումից և Երզնկայից կճեղքի և դուրս կգա ուղղակի Եփրատի հովիտը և ապա մինչև Ալեքսանդրետ, կամ կարող է շարժվել Երզնկայից դեպի

արևմուտք, դեպի Անատոլիայի խորքերը նույնպիսի արդյունքով: 200000-անոց այսպիսի մի բանակ կանոնավոր մատակարարման և պահպանման դեպքում առաջ կբերի Օսմանյան կայսրության անբողջական կործանումը Ասիայում: Բրիտանական բանակի հետ նրանք կկանգնեն Կ. Պոլսի դարպասների առաջ, մի բանակ, որ կտաիպի թուրքերին խաղաղություն խնդրել՝ հրաժարվելով Գերմանիայի շահերից:

Բուլղարիան շահագրգռված է միայն իր իշխանությամբ և ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում Գերմանիայի հաղթանակի նկատմամբ: Հենց որ Թուրքիան հրաժարվի առանցքի դաշնագրից, Բուլղարիան հաշտության պայմաններ կառաջարկի, և կարելի է համաձայնել նրա հետ: Դրանից հետո ավստրիացիները չեն կարող մնալ Սերբիայում երկու ամիս: Դաշնակից բանակները անարգել կարող են ներխուժել Ավստրիա և շարունակել իրենց առաջընթացը մինչև Բեռլին, մի բան, որ նրանք պետք է անեին երկու-երեք տարի առաջ: Հայերը այժմ կարիք ունեն ֆինանսական օգնության, և այս հարուստ կառավարության կողմից 10 միլիոն դոլարի հատկացումից ավելի նպատակահարմար բան չկա, քան այս բանակի ֆինանսավորումն ու կազմավորումը Թիֆլիսում, Կարսում և Էրզրումում: Արևմտյան ճակատում ըստ երևույթին մարտերը դադարել են: Ռուսաստանը դեմ է առել պատին: Ի՞նչ ծրագրեր ունեն մեր պարոններն այս պատերազմից հաղթանակով դուրս գալու համար: Դուք առայսօր ոչ մի ծրագիր չեք ներկայացրել: Որտե՞ղ են ձեր մասնագետները և նրանց տեսությունները: Ռազմական նպատակահարմարությունը և բարոյական արդարությունը միանում են կոչ անելու ձեզ՝ Հայաստանը գորահավաքում է իր վերջին ուժերը դիմակայելու մուսուլմաններին: Ընտրի՛ր այսօր, հենց հիմա, սինլքոր, ո՞ր թագավորին ես ծառայելու, Խաչի՞ն թե՞ Կիսալուսնին, Քրիստոսի՞ն թե՞ Մուհամմեդին: Այն աստղը, որ 19 դար առաջ կախվեց Բեթղեհեմի վրա, այժմ կանգնած է քրիստոնյա Հայաստանի վրա և կոչ է անում հզոր Ամերիկյան Հանրապետությանը դեպի համախմբում, որից էլ կծնվի ազատության, դեմոկրատիայի, քաղաքակրթության, քրիստոնեության հաղթանակը համաշխարհային այս պատերազմում:

Կովկասյան ժողովուրդները, այդ թվում նաև հայերը,

կանգնած են ձեր կողքին, քրիստոնյա ժողովուրդ: Կասպիականի ափին, Բաքվում՝ նավթարդյունաբերության այդ խոշոր կենտրոնում, ապրում են 80000 հայ, 120000 ռուս և 300000 քաթար մահմեդականներ, որոնք խոսում են թուրքերեն: Ամիսներ շարունակ քաթարները Գերմանիայից դրամ են ստանում, զենք են զնում և պատրաստվում կռվի: Նրանք նահանջող ռուս զինվորներին վճարում են բարձր գին, 870 դոլար, յուրաքանչյուր հրացանի համար: Հնարավոր է, որ հոները, թուրքերը և քաթարները մի օր թուրքական և գերմանական դրոշը բարձրացնեն Կասպիականի ափերին: Մահմեդականը պատրաստ է: Ո՞ր է քրիստոնյան:

Ամբողջ այս երկիրը (ցույց է տրվում) Հայաստան է: Մենք առանձնահատուկ շահեր ունենք Հայաստանում, քանզի այդ երկրում մենք ունենք չորս մեծ դպրոց: Ամերիկյան միսիոներությունը հիմնել է Բեյրութում մի համալսարան, Խարբերդում, Մարզվանում, Այնթափում, Մարաշում չորս քոլեջներ հայերի համար և այլ փոքր դպրոցներ: Արդյո՞ք ամերիկյան զինվորը կերկնջի զնալ այնտեղ, որտեղ ամերիկյան միսիոներները բարձրացրել են ամերիկյան դրոշը:

– Պրն Թիլտն. – Ջենտլմենը այն կարծիքին է, որ Բրիտանական և մեր մյուս դաշնակիցները պետք է Պաղեստինից և կամ Բաղդադից միանան հայերին և ուժեղացնեն հայկական բանակը, այդպե՞ս է:

– Պրն Լիտլ. – Այո, ճիշտ այդպես: Ահա, այստեղ է Մոսուլը, իսկ այստեղ՝ Բաղդադը (նա ցույց է տալիս քարտեզի վրա): Բրիտանական բանակը գրավել է Բաղդադը: Ինչպես ասացի, ռուսները որոշ ժամանակ առաջ հասան Մոսուլից 60 մղոն հեռավորության վրա, այժմ 100 մղոն: Այնքան էլ դժվար չի լինի անգլիացիների համար գրավելու Մոսուլը: Երկար ժամանակ չի պահանջվի, որ անգլիացիները թուրքերին դուրս շարտեն Մոսուլից և միանան հայերին: Մեծ դժվարություն չեն ծագի նրանց առաջխաղացման համար (ցույց է տրվում քարտեզի վրա): Հայերը կմիանան անգլիացիներին կիսաճանապարհին, եթե նրանց հնարավորություն տրվի:

Լորդ Բայրոնը գրել է.

«Հայ ժողովուրդը ճնշված, բայց ազնվական ժողովուրդ

է: Նրան էլ բաժին է ընկել ստրուկի լուծը և օրենքից դուրս հայտարարվելը, ինչպես հրեաներն ու հույները... Այս ժողովուրդը հարստություն է ձեռք բերել առանց վաշխառության, արժանացել է բոլոր այն պատիվներին, որ կարող է ձեռք բերել ճորտը առանց բանասարկության, առանց խարդավանքի: Բայց, այնուամենայնիվ, վաղուց նրանք գրավել են այդ ճորտանոցի մի մասը, որ վերջերս բազմապատկել է իր դոյակների քանակը: Գուցե դժվար լինի մատնացույց անել մի ազգ, որի տարեգրությունն ավելի նվազ արատավորված լինի հանցագործություններով, քան հայ ժողովուրդինը, որի առաքինությունը եղել է խաղաղությունը, իսկ վատ գործերը եղել են հարկադրաբար, պահանջով: Բայց ինչ որ էլ եղած լինի նրանց ճակատագիրը, իսկ եղել է շատ դառն, ինչ որ էլ լինի ապագայում, նրանց երկիրը երբևէ լինելու է ամենահետաքրքրականը երկրագնդի երեսին և միգուցե անհրաժեշտ է նրանց լեզուն ավելի մոտիկից ուսումնասիրել»:

Հինգ-վեց հարյուր տարի այս ժողովուրդը ճնշվել ու ոտնակոխ է եղել: Աշխարհում ոչ մի ժողովուրդ չի տոկացել այնքան, որքան հայ ժողովուրդը, և այն փաստը, որ նրանք մինչև օրս էլ ապրում են, որտեղ ապրել են դարեր շարունակ, ապացույց է, որ ունեն կամքի ուժ, կայունություն և հայրենասիրություն, ինչը մարդկության տարեգրության մեջ իր զուգահեռը չունի: Թվում է, եթե երկրագնդի երեսին կա մի բան, որ պետք է կոչ անի մեզ այս մեծ պայքարում, սա պետք է լինի: Այլ է Բելգիայի պարագան, որքան էլ տառապած լինի, երբ համեմատում են Հայաստանի հետ, իսկ ինչ վերաբերում է ինձ, հետևյալը կասեմ. այն պահին, երբ Բելգիան ներխուժման ենթարկվեց, շատ կցանկանայի իմ սեփական պատասխանատվությամբ մի ջոկատով գնալ և օգնել նրանց: Այդպես էի մտածում նրանց մասին (ծափահարություններ):

– Պրն Պլաթ. – Պրն նախագահ, կարե՞լի է մի հարց:

– Պրն Լիտլ. – Խնդրեմ, այո:

– Պրն Պլաթ. – Անգլիական ռազմական բարձր իշխանությունները հաստատել են, որ մեծ սխալ էր Կիպրոս կղզում գործ իջեցնելու գաղափարից հրաժարվելը, Ալեքսանդրետում կամ մոտիկ ցամաքամասում ռազմական բազա

չատեղծելը, որը հնարավորություն կտար անմիջապես շարժվել դեպի Միջագետք, դեպի Հայաստան, առանց Դարդանելը գրավելու փորձի: Ենչտ է դա:

– Պրն Լիտլ. – Իմ կարծիքով, Չերչիլի հարձակումը Դարդանելի վրա ավելի շատ ուժի ցուցադրում էր, քան մի այլ բան, որ դաշնակիցները ձեռնարկել են: Լեռնարդ Վուդն ինձ ասաց՝ այդպես կաներ Նապոլեոնը: Բայց սա ավելի հեշտ առաջադրանք էր՝ նվազ խոչընդոտներով: Այստեղ կա երկաթուղի՝ Ալեքսանդրետից մինչև Կ. Պոլիս, ապա դեպի արևելք մինչև Եփրատ, դեպի հարավ մինչև Երուսաղեմ, Դամասկոս, մինչև Արաբիա: Ինձ համար պարզ չէ, թե ինչու անգլիացիները ցամաք դուրս չեկան այդտեղ: Չորքի ցամաքահանումը թուրքական զորքի թիկունքում՝ Սիրիայում, կոչնչացներ թուրքական այդ բանակը կամ կպարտադրեր նահանջել: Դուք պետք է հիշեք, որ 80 տարի առաջ եգիպտացի մի Մոհամեդ Ալի արշավեց այդտեղից մինչև Կոնիա, Անատոլիայի սրտում: Եթե Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը չմիջամտեին, Մոհամեդ Ալին կհաղթեր թուրքերին՝ արշավելով մինչև Կ. Պոլիս, գահընկեց կաներ Սալթնին և կհայտնաբերեր իր կայսրության ստեղծումը, որը պիտի տարածվեր Ռուսաստանից մինչև Ավստրիա, մինչև Նեղոսի ափերը: Ծեր մարդը՝ Մոհամեդ Ալին, ստիպված եղավ հրաժարվել, երբ եվրոպացիները պարտադրեցին ետ քաշվել իր նվաճած տարածքներից, բանակը հեռացնել, պայմանագիր ստորագրել, ընդունելով ընդմիշտ Օսմանյան կայսրության փոխանորդի գահը: Այստեղ՝ Ալեքսանդրետում, առկա էր ստրատեգիական բանալին դեպի Փոքր Ասիա:

Եվրոպան ոչինչ չի արել Հայաստանի համար, կամ նրա թուրքական մասի համար: Փաստորեն քրիստոնյա պետությունները ավելի շատ վնաս են բերել, քան բարիք, որովհետև նրանք պաշտպանել են Բեռլինի պայմանագիրը, մի սնամեջ ծաղր, որով ռզևրեցին այդ ժողովուրդներին, ապա հեռացան, թույլ տալով թուրքերին սպանելու նրանց, պատվազրկելու, հազարներով ոչնչացնելու: Ես նշեցի, որ կառավարությունը ճիշտ վարվեց, մերժելով պատերազմ հայտարարել Բուլղարիային: Հույս կա իմաստուն, խելոք քաղաքականության համար: Ինչ վերաբերում է թուրքերին, դրությունը շատ տարբեր է: Էնվեր

փաշան իր երկիրը քաշեց այս պատերազմի մեջ առանց որևէ պատճառի, բացի համակրանքը դեպի գերմանական ռազմական ինքնակալությունը. կամ նրանք միասին կկռվեն, կամ միասին կտապարվեն, ինչպես հարկն է:

Միացյալ նահանգները վտանգի է ենթարկում միլիարդավոր դոլարներ և միլոնավոր ամերիկյան կյանքեր ներկա պատերազմի արդյունքի առումով: Թուրքերը կռվում են մեր դեմ, ինչո՞ւ նույնը չենք անում մենք: Նրանք անում են այն, ինչին մենք դեմ ենք, և Մերձավոր Արևելքում չի լինի ոչ խաղաղություն և ոչ դեմոկրատիա, եթե թուրքերը չպարտվեն: Եթե մենք պատերազմ չհայտարարենք Թուրքիային և պատերազմ չսկսենք նրանց դեմ, նրանք կնվաճեն Հայաստանն ու Կովկասը, գերմանական դրոշը կծածանվի այդ լեռնաշղթայի վրա, Սև ծովի և Կասպիականի վրա, և նրանք կտիրեն աշխարհը: Մենք հասել ենք այնտեղ, ուր ճակատագիրը պարտադրում է, որ մենք պետք է շարժվենք ավելի առաջ՝ մեր ինքնապաշտպանությունը նկատի ունենալով: Մեր դրոշակը պետք է բարձրանա, ծածանվի և դրա համար ավելի լավ պատճառ, ավելի խելամիտ նպատակ, ավելի բարձր արժանապատվություն չկա, քան դրոշի ծածանվելը Միջագետքի, Հայաստանի լեռների ու Պաղեստինի վրա՝ պաշտպանելու Հիսուս Նազովրեցու վարդապետությունը և ոչնչացնելու ռազմական ինքնակալությունը, որի դեմնա պատերազմ հայտարարեց տասնինը դար առաջ (ծափահարություններ):

– Պրն Ֆեյրֆիլդ. – Որքա՞ն է հայ բնակչության թիվը Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս: Որքան ինձ հայտնի է, այդ թիվը հասնում է մոտ երեք և մեկ քառորդ միլիոնի:

– Պրն Լիտլ. – Մոտավորապես այդքան է այժմ: Նրանց թիվը չորս միլիոնից ավելի էր նախքան վերջին ջարդերի սկսելը՝ 1915թ.:

– Պրն Ֆեյրֆիլդ. Հայ ժողովրդի ո՞ր հատկությունը թույլ չի տվել միավորվելու, կազմակերպելու և ստեղծելու մի կառավարություն, որը կպայքարեր թուրքական կայսրության դեմ:

– Պրն Լիտլ. – Նրանց չի թույլատրվել գենք կրել: Չենք կրող հայը սպանվել է, իսկ այժմ յուրաքանչյուր երկրորդ հայը՝

թեկուզ առանց գենքի: Հին ժամանակներում, դարեր շարունակ նրանք ունեցել են իրենց պետականությունը:

– Պրն Ֆեյրֆիլդ. – Նրանք լիովին զինաթափվե՞լ են, այդպե՞ս է:

– Պրն Լիտլ. – Այո, այդպես է, և եթե երբևէ նրանք սեփականության տեր են եղել, դա պատճառ է դարձել քրդերի ասպատակության, թուրքերի կողմից բռնագրավման: Չորս հարյուր տարի քրդերն ու թուրքերը ստրկացրել են հայերին, և նրանք պարտավոր են եղել կերակրել թե՛ մեկին և թե՛ մյուսին, որպեսզի հաստատ մնան իրենց տեղում: Դարեր շարունակ շրջապատված լինելով թշնամիներով, կտրված ժամանակակից աշխարհից, զարմանալի է, որ հայը դիմացել է ընդհանրապես: Հրեաները լքեցին իրենց բնիկ երկիրը, դարեր առաջ, և շատ ազգեր անհետացել են պատմության երեսից, երբ հայոց վերջին թագավորը մահացավ 500 տարի առաջ:

Երկար ժամանակ հայերը հույսեր էին փայփայում, որ հզոր քրիստոնյա պետությունները կստեղծեն մի ներկայացուցչական կառավարություն Թուրքիայաստանում պրոտեկտորատի կարգավիճակով, որ պետք է տարածվեր Միջերկրականի Մերսին և Ալեքսանդրետ նավահանգստային քաղաքներից մինչև ռուսական սահմանները: Ռուսական բանակի քայքայումից հետո Ռուսահայաստանի համար կստեղծվի այնպիսի մի վիճակ, երբ մեծ տերությունները պետք է Ռուսահայաստանը դնեն նույն պրոտեկտորատի իշխանության տակ: Հետո նրանք ծրագրում են երկաթուղի կառուցել Միջերկրականից մինչև Էրզրում, և միանալ Թիֆլիսի և Բաքվի երկաթուղագծին մինչև Կասպիականը: Իրադարձությունների նման զարգացման դեպքում Հայաստանը կդառնա ժամանակակից աշխարհի մի մասը, որտեղ կստեղծվի կյանքի, գույքի ապահովություն, կերաշխավորվի կրթության և կրոնի ազատություն, կծաղկեն գյուղեր, գյուղաքաղաքներ, քաղաքներ, ավաններ, կստեղծվեն թերթեր, քոլեջներ և դպրոցներ, որոնք կշարունակեն ամերիկյան միսիոներների գործը, որն արդեն նվաճումներ է արձանագրել: Աշխարհն ավելի լավ և բարոյական ներդրում չի կարող կատարել, քան ձեռնարկել Հայաստանի զարգացումը: Պողոս Նուբար փաշան՝ Եգիպտոսի Մեծ Նուբար փաշայի որդին, այժմ

հայ ժողովրդի գլխավոր ներկայացուցիչն է: Նա ձևակերպվեց պրոտեկտորատի գաղափարը հայ ժողովրդի համար և ներկայացրեց մեծ տերություններին: Քաղաքական վերջին զարգացումները վտանգավոր դարձան հայերի համար, այնքան վտանգավոր, որ ինքնապաշտպանությունը նրանց համար ամենաանմիջական անհրաժեշտությունը դարձավ: Ինչպես նկատեցի, վրացիների հետ նրանք կարող են 200000 զինվոր կռվի հանել թուրքերի դեմ: Նրանք այժմ խնդրում են դաշնակիցներից զենք և ռազմական հանդերձանք՝ պատրաստ վիճակի մեջ պահելու 200000-անոց բանակը: Նրանց լավագույն պաշտպանությունը կլինի թուրքերի լիակատար ջախջախումը, և նրանք իրավունք չունեն հանգստանալու մինչև դրա կատարյալ ավարտը: Յուրաքանչյուր զգացմունք և համակրանք, բանականության ամեն մի արտահայտություն, մեր սեփական շահերի յուրաքանչյուր պահանջ, տարրական դատողության ամեն մի օրենք պահանջում է, որ դաշնակիցները ընդառաջեն նրանց ցանկությանը՝ ցուցաբերեն ֆինանսական օգնություն և օժանդակականություն իրականացնելու իրենց մեծագույն նպատակը:

Տարիներ առաջ մեզանից մի երիտասարդ մարդ այցելեց նրանց երկիրը: Նա մասնագիտությամբ երկրաչափ ճարտարագետ էր՝ ուղարկված Կիպրոսի Բրիտանական կառավարության կողմից: Հետագայում նա վերադարձավ Եգիպտոս՝ նպատակ ունենալով վերականգնել այդ հնագույն թագավորությունը, աշխարհականացնել այդ երկիրը, և նա այդ իրագործեց:

Քիչները լայն մտահղացումների տեր մարդ էր՝ համընդհանուր նպատակներով: Նա հավատում էր, որ անգլիախոս մեծ տերությունները պարտավորություն ունեն Եգիպտոսի ու Հայաստանի նկատմամբ և ահա այդ գործնական նպատակն էր, որ մղեց նրան դեպի առաջ այդ պարտավորությունը իրագործելու: Նա մի անգամ հետևյալը պատմեց: Անգլիական նավատորմը մտավ Ալեքսանդրիա՝ նավահանգստում կասեցնելու անկարգությունները, կարգ ու կանոն հաստատելու: Երբ արար փաշայի բանակը ջախջախվեց, նրանք առաջարկեցին օտարերկրյա բոլոր նավերին հեռանալ Եգիպտական ջրերից նախ-

քան իրենք կսկսեն կրակել: Վերջին նավը, որ դուրս եկավ նավահանգստից, - ասաց Քիշները, ամերիկյան մի ռազմանավ էր, որը նավարկում էր անգլիական նավատորմի շուրջը մինչև հեռանալը: Նավից լավում էին զինվորական երաժշտության հնչյունները, փողփողում մի սիմֆոնիկ ազդանշան. «Ես միտք ունեմ ձեզ հետ լինել»: Նա հավատում էր, որ այս մեծ, լայնարձակ աշխարհում մարդկային ցեղի համար բավարար տեղ կա ապրելու համար և չպետք է այն վերածել տևական պատերազմների վայր տարբեր ժողովուրդների միջև: Տունդարձից անմիջապես հետո նրանից մի նամակ ստացա, սեղմ ու խիտ նախադասություններով, ուր նա արտահայտում էր իր տեսակետներն ու կարծիքը այդ հարցերի մասին: Նրա կարծիքով, մեր երկու մեծ ազգերը պետք է կազմեն մի միասնական ուժ աշխարհի վրա ընդմիշտ, մի գաղափար, որ նա արտահայտել է անկաշկանդ, իրեն հատուկ անմիջականությամբ:

«Սիրդարիե, Կահիրե,

Մարտի 23, 1894

Թանկագին պրն Լիտլ

Շատ շնորհակալ եմ քո բարեմաղթանքների համար: Վախենում էի, որ Լորդերի պալատը փուլ գա նախքան իմ տեղ հասնելը: Ես հաճախ և հաճույքով եմ հիշում մեր զրույցները և տակավին սպասում եմ այն օրվան, երբ անգլիախոս ժողովուրդներն այնքան սերտորեն կմոտենան իրար փոխադարձ շահերով, որ մենք ի գորու կլինենք կասեցնելու աշխարհի որևէ մասում տեղի ունեցող ամեն մի հիմարություն:

Չեմ պատկերացնում, թե ինչու պիտի այժմ Ամերիկայում հակաանգլիական տրամադրություններ տիրեն: Մենք պետք է ամենամոտիկ բարեկամները լինենք:

Չերդ անկեղծորեն

Հերբերտ Քիշներ»

Ներկայացուցիչների պալատի հարգելի պարոնայք, Քիշները՝ այդ մեծ գորավարը, այժմ հանգստանում է իրեն վայել ամենահարմար դամբարանում՝ անսահման օվկիանոսի խոր լռության մեջ: Նա զոհվեց պատերազմի ամենաթեժ պահին՝ Հյուսիսային օվկիանոսի սառցասարերի ստվերների տակ, նրա հոգեհանգստյան պատարագը եղան փրփրաբաշ ալիքներ:

րի ահեղակոչ բախումները, որոնք փշրվում են հյուսիսային կղզիների ժայռոտ ափերին: Այստեղ, Արևմտյան աշխարհի այս հանրապետության կոնգրեսի արձանագրության մեջ, հանրապետություն, որի հաջողությունների և հնարավորությունների նկատմամբ մեծ համակրանք ուներ, ես թողնում եմ նրա պատգամը՝ խլված օվկիանոսի սառը ջրերից, որով նա հորդորում և առաջ էր մղում մեզ դեպի մեր վսեմագույն պարտականության կատարումը Մերձավոր Արևելքում, որտեղ նա իր կյանքը շխնայեց, ջանքեր թափեց և նվաճումներ ունեցավ հանուն քրիստոնեության, հանուն քաղաքակրթության:

Այս մեծ պայքարի ամեն մի փուլում, մեր թշնամիները դաշնակիցներին նեղն են դրել: Եթե նրանք կրկին հաջողություն ունենան Սիբիրում, Հայաստանում, ի՞նչ ճակատագիր կվիճակվի մեզ: Դուք այժմ պատեհություն ունեք՝ դեպի Մոսկվա ուղարկելու ճապոնական քաջարի մի զորաբանակ դիմակայելու գերմանացիներին: Դուք հնարավորություն ունեք ոտքի կանգնեցնելու Հայաստանը, զինելու, որպեսզի կռվի ձեզ համար: Չեզ են ասում, պարոնայք, 60 օրվա ժամանակամիջոցում հավանաբար դուք լսեք այդ ոսկի հնարավորության մահագույժ զանգերի ձայնը: Առիթը ներկայացել է՝ կա՛մ դեմոկրատիա, կա՛մ ինքնակալություն: Եվրոպայում այն մարդիկ, ովքեր առաջատար դեր էին խաղում պատերազմի սկզբում, փաստորեն չկան, անհետացել են: Յուրաքանչյուր երկիր կարող է մասնակցել այս պատերազմին, բայց միայն հզորները կկարողանան կռվել մինչև վերջ և հաղթել: Դեմոկրատիան պետք է հաղթի ինքնակալությանը նախքան այս հակամարտության ավարտը, իսկ կա՞ ավելի լավ առիթ մեզ համար սկսելու այդ հարձակումը: 10 միլիոն դոլարի հատկացում Թիֆլիսին, 100 հազար զորքի իջեցում Բաղդադ կամ Սուեզ, գործելու խելամիտ ազատություն ճապոնացիներին, ահա այս ամենը կարող է շուտ տալ պատերազմի ընթացքը:

Անցյալում, երբ ես ոտք դրեցի Նեղոսի հովտում գտնվող հին Թեբեսի ավերակների վրա, այցելեցի մեծ Մեմնոնի արձանը: Հավանաբար գիտեք, որ Մեմնոնը Եգիպտոսի երաժշտության աստվածն է, որի մասին պատմում են, որ ամեն առավոտ արևածագին այդ արձանը սկսում է երգել: Անցել է 15 դար,

արևը-արձանն այլևս չի երգում: Մի օր երբ ձիով ավելի հեռուն գնացի այդ հովտում, դեմս դուրս եկավ մի կավաշեն խրճիթ, որի ճակատին ցուցանակի վրա գրաված էր՝ «Ամերիկյան միսիոներություն»: Այստեղ, այս խրճիթում բնիկ մի եգիպտացի՝ դաստիարակված ամերիկյան միսիոներների ձեռքի տակ, գրագետ էր դարձնում եգիպտացի երեխաներին: Ի պատիվ այս մեծ հանրապետության ներկայացուցչի, նրանք երգեցին իմ լեզվով, թեև ես դժվարությամբ էի հասկանում կոտրատված, զվարճալի անգլերենը: Քիչ այն կողմ ես տեսա Մեմնոնի արձանը՝ սառը և լուռ: Այլևս նա չէր ողջունում արևածագն իր սուրբ երաժշտությամբ: Երկար դարեր նա մնացել է անշարժ ու խուլ, նրանց հին քաղաքակրթությունը թաղվել է անհիշելի ժամանակների իշխանության ոլորտներում, նրանց բանակները ցրիվ են եղել, զոհասեղանները՝ քանդված են: Հետո, մի ակնթարթ կրկին նայեցի «Ամերիկյան միսիոներություն» ցուցանակին և ըմբռնեցի՝ ոչ թե Արևելքի արևն է համբուրում երգ-երաժշտությամբ դիմավորող Մեմնոնի շրթունքները, այլ Արևմուտքի արևը, որը շողում է լայնատարած Ատլանտյանի արևմտյան ափերից, համբուրում, վառում Մեմնոնի գավակների շրթունքներն ազատության և քաղաքակրթության երգերով:

Ժամանակը եկել է, երբ ամերիկյան զինվորը Արևելքում կավարտի այն առաջադրանքը, որն ամերիկյան միսիոներները սկսեցին, և մի նոր Հոմերոս կերգի մի նոր աշխարհի խաղաղության մասին:

Չքնաղ արևը երկնի անհունից կախված՝ ջրերի վրա,
Երկնի հավերժական բրոնզյա բոցավառ դարպասների միջով,

Երկրի լայնություններով սփռել է իր հուստ շողերը
Մատուցելու աստվածներին և ադամորդուն պայծառ
առավոտ:

(Ծափահարություններ):